Azg
armenian daily

28 ՓԵՏՐՈՒԱՐ 1997. ՈՒՐԲԱԹ # 38 (1292)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ

ՌԴ պաշտպանության նախարարն առայժմ Երեւան չի գա

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Իգոր Ռոդիոնովի այցը Հայաստան, որը նախատեսված էր մարտի 3-5-ը, նշված ժամկետում տեղի չի ունենա օբյեկտիվ հանգամանքների պատճառով: Դրա մասին մեզ հայտնի դարձավ երեկ երեւանյան ռազմական աղբյուրներից: Ակնհայտ է, որ այցը հետաձգելու համար պատճառ դարձան ՌԴ պաշտպանության նախարարության շուրջ ծավալվող կրքերը:

ՌԴ ռազմական գերատեսչության ղեկավարը պիտի այցելեր Հայաստան ու Վրաստան հանդիպումներ ունենար երկու պետությունների ղեկավարության հետ ռազմաքաղաքական համագործակցության, մասնավորապես Անդրկովկասում ռուսաստանյան ռազմակայանների տեղակայման հարցերը քննարկելու համար:

Իգոր Ռոդիոնովը մի քանի անգամ եղել է Հայաստանում 1988-89 թթ. Անդրկովկասյան կարմրադրոշ ռազմական օկրուգի հրամանատար եղած ժամանակ:

ՏԻԳՐԱՆ ԼԻՆԻՅԱՆ,
ՌՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

ՍՈՒՄԳԱՅԻԹ

«Մոռանալով անցյալը, տանուլ կտանք մեր ապագան»

9 տարի առաջ, դարաբաղյան շարժման մակընթացության օրերին, Ադրբեջանի հայ բնակչության նկատմամբ թուրքական ծանոթ ձեռագրով իրագործվեցին զանգվածային կոտորածներ, հայ բնակչության բռնի տեղահանություն: «Գիշատիչների խրախճանքն» սկսվեց փետրվարի 27-ին ինտերնացիոնալիզմի «բնորան» Սումգայիթում, շարունակվեց 3 օր, որից հետո բռնարարքների հրդեհը տարածվեց Ադրբեջանի մյուս հայաբնակ շրջաններում՝ չինայելով մայրաքաղաք Բաքուն: Ադրբեջանի կազմում ԼՂՀ-ի համար անվտանգության երաշխիքների ապահովման ջատագովները, միջազգային հանրությունն այն ժամանակ չդատապարտեցին եւ այսօր մոռացել են Սումգայիթը, Բաքուն, փոխարենը հրապալի հիշելով եւ հիշեցնելով տարածքային ամբողջականության դրույթը: Սրանից ավելի ցավալի, թերեւս, մեկ այլ իրողություն է, որ Հայաստանի իշխանություններ, որի վերին էշելոններում կանգնած գործիչները ժամանակին պատին էին սեղմում Խորհրդային Հայաստանի պետական այրերին պահանջելով բանաձեւեր ընդունել Սումգայիթի ցեղասպանության վերաբերյալ, այսօր ըստ երեւույթին նախընտրում են չփորփրել հին վերքերը:

Զարմանալի չէ, որ բռնագաղթածների շահերի պաշտպանության, հիշողության վակուումն այսօր որոշել են լցնել իրենք բռնագաղթածները, որ երեկ մայրաքաղաքի հասարակայնության մի խումբ ներկայացուցիչների հետ սգո երթի էին դուրս եկել ոգեկոչելու Սումգայիթում, Բաքվում, Գանձակում եւ Ադրբեջանի այլ բնակավայրերում իրագործված հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը: Ցավոք, երթի մասնակիցների մեջ հիշ էին հանրապետությունում գործող բազմաթիվ հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները, այդ թվում նրանք, որ նախորդ օրն ակտիվորեն մասնակցում էին ՀՀ ԳԱ դահլիճում «Ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» հրավիրված կլոր սեղանին: Անշուշտ, բացակայում էին նաեւ ՀՀ ազգընտիր իշխանությունների ներկայացուցիչները: Տես էջ 2

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչապետը շարունակում է բուժումը

Թերթերն ազատվել են ավելացրած արժեքի հարկից

Հայաստանի վարչապետ Արմեն Սարգսյանը Լոնդոնում շարունակում է բուժումը: Այս մասին երեկ կայացած բրիֆինգում հայտարարեց կառավարության աշխատակազմի ղեկավար Գագիկ Շահբազյանը: Նրա ասելով, վարչապետը շարունակում է բուժումը, եւ բժիշկների հավաստիացմամբ՝ արդեն բարելավում կա: Արմեն Սարգսյանը շարունակում է տանել եւ ստորագրել կառավարական որոշումները:

Գագիկ Շահբազյանը տեղեկացրեց, թե կառավարության նիստում որոշում է ընդունվել մամուլը ավելացրած արժեքի հարկից ազատելու մասին: Ինչպես նշեց ֆինանսների առաջին փոխնախարար Պավել Սաֆարյանը, այդ որոշումը վերաբերում է միայն թերթերին, լինեն դրանք կառավարական, թե ընդդիմադիր: Առայժմ, ըստ այդ որոշման, թերթերը ավելացրած արժեքի հարկից կազատվեն վեց ամիս՝ սկսած ապրիլի 1-ից: Փոխնախարարը հույս հայտնեց, թե նշված որոշումը թույլ կտա թերթերին ֆինանսական տեսակետից փոքր-ինչ շահութաբեր դարձնել իրենց գործունեությունը:

Ուշ երեկոյան մեզ հաջողվեց հեռախոսով կապվել Լոնդոն եւ տեղեկանալ, որ վարչապետ Ա. Սարգսյանն իսկապես գտնվում է հետվիրահատական ապաքինման շրջանում, բժիշկների հսկողության ներքո: Իրոք, նա օրվա մեծ մասն անցկացնում է Հայաստանից ստացված տեղեկատվությունն ուսումնասիրելով եւ համապատասխան հանձնարարականներ տալով: Այնուամենայնիվ, նրա ջիղերը խիստ սահմանափակ են, հասկանալի պատճառով: Ինչ վերաբերում է նրա վերադարձի հավանական օրվան, դեռեւս անհայտ է:

Ա. Հ.

Այսօր՝ ՁԼՄ ընկերակցության ընդլայնված ժողովը

ԵՐԵՒԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Փետրվարի 28-ին՝ ժամը 12-ին Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների ընկերակցությունը Ընդհանուր ժողով կգումարի Ժուռնալիստի տանը, ուր ենության նյութ են դառնալու հայաստանյան մամուլի առաջ ծառացած օրախնդիր հարցերն ու փորձ է արվելու ընդհանրական մոտեցում մշակել տեղեկատվության միջոցների առնչությամբ ի մոտո առնվելիք քայլերի նկատմամբ: Ժողովին մասնակցելու հրավեր են ստացել ոչ միայն ընկերակցության 30 անդամները, այլեւ կանոնավորապես լույս տեսնող բոլոր պարբերականները, որոնց շահագրգիռ մասնակցությունը քննարկումներին խիստ ցանկալի է նկատվում:

«Լինսի» հիմնարկը կատարեց խոստումը



«Հայաստան» հիմնադրամի Արեւմտյան Ամերիկայի հանձնաժողովը հայտնել է, որ Քըրք Քըրքորյանի «Լինսի» հիմնարկը, իր խոստման համաձայն, կրկնապատկել է 1996 թ. մայիսի 27-ի հեռուստամարաթոնի արդյունքում գանձված բոլոր գումարները: Այսպիսով, Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի կառուցման համար կազմակերպված հեռուստամարաթոնի արդյունքում հիմնադրամին է հանձնվել 4.333.076.26 դոլար: Այս գումարը համապատասխանում է հիմնադրամի կողմից մինչեւ 1996 թ. դեկտեմբերի 31-ը գանձված ընդհանուր գումարին: «Հայաստան» հիմնադրամի Արեւմտյան Ամերիկայի հանձնաժողովը շնորհակալություն է հայտնել Քըրք Քըրքորյանին, ինչպես նաեւ «Լինսի» հիմնարկի նախագահ Ջիմ Ալեքյանին եւ Ալեխ Եմենիճյանին:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ

Դեսպանատներն ակնկալում են իշխանությունների մեկնաբանությունը, իսկ Զուրաբյանը նողկանք է զգում ծիկրակումներից

Փետրվարի 27-ին «Այժմ» թերթում տպագրված Վանո Սիրադեղյանի եւ Վազգեն Սարգսյանի 1996 թ.-ի հոկտեմբերին մի խնջույքում ունեցած ելույթները արձագանքվեցին նաեւ Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպանությունների կողմից: Ինչպես հաղորդում է «Փաստ» գործակալությունը, այդ ելույթներում մասնավորապես ԱՄՆ հասցեին որոշակի մեղադրանքներ են ներկայացվել, որոնք փոխակերպվում են հայհոյանքի: ԱՄՆ դեսպանությունն այդ առթիվ տարածել է հետեւյալ հայտարարությունը. «Մենք հասկանում ենք, որ այդ արտահայտություններն արվել են մասնավոր հավաքույթի ժամանակ: Մենք Հայաստանի կառավարությանն ենք բողնում այնտեղ ասվածի մեկնաբանությունը: Միացյալ Նահանգները եւ Եվրոպան Հայաստանի կողքին են եղել ամբողջատիրությունից դեպի բաց, ժողովրդավարական, ազատ շուկայական հասարակության անցման դժվարին փուլում: Մենք հպարտանում ենք այն նյութական ու բարոյական օժանդակությամբ, որով նպաստել ենք այս երկրի նվաճումներին: Հայաստանը կարող է հույս դնել մեր շարունակական օժանդակության վրա: Որեւէ այլ մեկնաբանություն այս հարցով մենք չենք տա»:

Ի դեպ, նույն բովանդակությամբ մեկնաբանություններ «Ազգ»-ը ստացավ նաեւ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դեսպանատներից: Այլ դեսպանություններ առայժմ մեկնաբանություններ չեն տալիս: Իսկ նախագահի մամուլի քարտուղար Լեւոն Զուրաբյանը պատասխանելով «Փաստի» հարցմանը, ասել է. «Կա այդպիսի տեսաերիզ, թե ոչ ինձ ամենեւին չի հետաքրքրում, քանի որ ընդհանրապես չի հետաքրքրում ուրիշների մասնավոր կյանքը: Դռան անցքից ծիկրակելու ընդդիմության մեթոդները միայն նողկանք են առաջացնում»: Ասվածին ավելացնենք նաեւ, որ երեկ կառավարության նիստի ընդմիջմանը տեղի ունեցած բրիֆինգում թղթակցի այն հարցին, թե «Այժմ»-ի հրապարակածը որեւէ ձեւով անդրադարձա՞վ կառավարության նիստի աշխատանքային տրամադրությունների վրա, կառավարության աշխատակազմի ղեկավար Գագիկ Շահբազյանն ասաց. «Բացարձակապես»:

Ման Տուլեեւը կրկնում է իր մեղադրանքները

Ռուսաստանի ԱՊՀ երկրների հետ համագործակցության նախարար Ամանգելդի Տուլեեւը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է, որ վերջին երկու տարիների ընթացքում Ռուսաստանից Հայաստան է ուղարկվել 270 մլրդ. ռուբլու (42,5 մլն. դոլարի) սպառազինություն եւ ռազմական տեխնիկա: Ընդ որում, հայտարարել է նախարարը, այդ ամենն առավել է անվճար, տեխնիկայի փոխադրման ծախսերը նույնպես չեն փոխհատուցվել: «Բանակը ծանրագույն վիճակում է, իսկ տվյալ դեպքում, խնդրեմ, դրա դիմաց ոչ մի ռուբլի չի ստացվել», հայտնել է Ա. Տուլեեւը եւ դրա հետ մեկտեղ «պատասխանատվությամբ հայտարարել», որ այդ ամենը կատարվել է նախագահի թիկունքում, կառավարության նախագահի թիկունքում, ԱԳՆ թիկունքում, իսկ «այդ տեխնիկայի մատակարարման համաձայնագիր համագործակցության նախարարությունը նույնպես, բնականաբար, չունի»: «Եթե մի կողմից ԱԳՆ-ն համագործակցության նախարարության հետ հնարավոր ամեն բան անում է, որպեսզի ազնիվ ինտեգրացում լինի, այդ ժամանակ թիկունքում ուրիշ աշխատանք է կատարվում, որն ուղղված է այդ ինտեգրացիայի դեմ: Մեզ հարկավոր է, որ Լեռնային Ղարաբաղում այլեւս հրաձգություն չլինի: Հենց այնպես տանկեր չեն տալիս: Նշանակում է, ինչ-որ մեկին ձեռնտու է, որ այդ խաղաղությունը չլինի», հայտարարել է ռուսական նախարարը: Երկրորդ հարցին, թե դա ում է ձեռնտու, Ա. Տուլեեւը հայտարարել է. «Դա բող նշեն զինվորական դասախազությունը եւ համապատասխան մարմինները, իսկ մեր խնդիրն է՝ մենք այժմ պատրաստվում ենք հայասան ուղեւորության, պատրաստում ենք մի շարք տնտեսական համաձայնագրեր: Ես որպես համագործակցության նախարար, ընդհակառակը, պնդում եմ, որ Լեռնային Ղարաբաղ գնացիներ գնան, որպեսզի մենք վերջապես Իրան դուրս գանք Ջուլֆայով, եւ յուրաքանչյուր կողմ կստանա 200-ական միլիոն դոլար միայն տարանցիկ բեռնափոխադրումների համար: Մեզ խաղաղություն է պետք, առանց խաղաղության, առանց հաղթական կայունության ինտեգրացիան պարզապես անհնար է»:

ԼՈՅՍԱՆ ՏԱՊԱՆ

ԱՅԺՄԱՅԻՆ

Ռամկավարները կոչ են անում համախմբվել Արցախի եւ Հայաստանի պետականության պաշտպանության գործում

ԵՐԵՎԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ԼՈՅՍԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության ատենապետ Հարություն Կարապետյանը, որն օրերս է վերադարձել ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում կայացած ՌԱԿ-ՀՌԱԿ ընդհանուր ժողովից, Նոյյան տաղան գործակալության թղթակցի հետ զրույցում նշել է, որ ժողովը Ռամկավար ազատական կուսակցության ամենապայծառ էջերի ձգտումների արտահայտությունն էր: Ընդհանուր ժողովի 50-ից ավելի պատգամավորներ ժամանել էին Լիբանանից, Սիրիայից, Հարավային Ամերիկայի երկրներից, Իրանից, Մեծ Բրիտանիայից, Կանադայից եւ ԱՄՆ-ի մի շարք նահանգներից: Ըստ Հ. Կարապետյանի, ժողովի հրավիրման շարժառիթներից էին կուսակցության ներքին խնդիրները, որոնք Բոստոնում գտել են իրենց լուծումը: Պատգամավորներն անդրադարձել են նաեւ համահայկական խնդիրներին, որոնցից կարեւորագույնն Արցախի հարցն էր: Ժողովում նշվել է, որ անկախ կուսակցական տարաձայնություններից, անհրաժեշտ է համախմբվել Արցախի խնդրի արդարացի լուծմանն ամեն կերպ նպաստելու համար, քարոզչական աշխատանքներ տանել արտերկրում Հայաստանի, որպես ժողովրդավարության ձգտող երկրի իմիջը պահպանելու նպատակով: Հարց է բարձրացվել նաեւ ՀՀ ներկայիս կառավարության տնտեսական ուղեգծին աջակցելու վերաբերյալ: Անհրաժեշտ է համարվել քարոզչական աշխատանք տանել տարբեր երկրներում Հայաստանում ներդրումներ կատարելու գործընթացը խթանելու նպատակով, ինչը նոր աշխատատեղերի ստեղծման շնորհիվ կնեղմացնի հանրապետությունում առկա սոցիալական բեռնաթափումը: Ժողովականներն ընդունել են հայտարարություն, որում հայությանը կոչ են անում բազմապատկել ջանքերը Արցախի խնդրի արդարացի լուծմանը հասնելու նպատակով եւ սատար կանգնել Հայաստանի պետականությանը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊԱՏԱՍԽԱՆ

ՍՈՒՍԳԱՅԻԹ

«Մոռանալով անցյալը, տանուլ կտանք մեր աղագան»

Սկիզբը էջ 1

Այս փաստի վերաբերյալ մեր հարցին ի պատասխան, ՀՊԿ նախագահ Արամ Մարգայանը, ձեռնպահ մնալով մեկնաբանություններից, հիշեցրեց, որ հունվարի 20-ին, երբ նշվում էր Բաքվի իրադարձությունների տարելիցը, Ադրբեջանի նախագահն ինքն էր ծաղկեպսակ դրել համապատասխան առիթով կառուցված հուշարձանին:

Ինչեւէ, ծաղկեպսակ դնելով Սումգայիթի զոհերի հիշատակի խաչքարին եւ մեկ րոպե լռությամբ հարգելով նրանց հիշատակը, երթի մասնակիցներն ուղեւորվեցին կամերային երաժշտության տուն, ուր տեղի ունեցավ հուշերեկո՝ նվիրված սումգայիթյան ողբերգության 9-րդ տարելիցին: Պատանդների պատշտպանության ֆոնդի գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանն ամփոփեց սումգայիթյան ջարդերի հետեւանքը՝ ավելի քան 14 հազար ծեծված, բռնագաղթած, գրեթե 200 խոշտանգված եւ սպանված, 75 հոգեկան հիվանդ դարձած նախկին սումգայիթցիներ: Տիկին Ալավերդյանը շեշտեց ի պատշտպանություն բռնությունների զոհերի, հանուն Արցախի փրկության, 1997-ը հասարակական-քաղաքական կազմակերպությունների, պետական կառույցների ջանքերի միավորման տարի դարձնելու անհրաժեշտությունը: «Խոսքից գործին անցնելու ժամանակն է, ասաց նա, եթե այսօր չպատշտպանենք մեր անցյալը, տանուլ կտանք աղագան, կնպաստենք հաջորդ ցեղասպանությանը, որ այս անգամ կիրագործվի Արցախում»: Այս առնչությամբ իրենց մտահոգությունները հայտնեցին «Պատրիոտ» հայ-հունական միության նախագահ Էդուարդ Փոլատովը, ՍԻՄ ներկայացուցիչ Անդրանիկ Բուռնազյանը, որն անդրադարձավ Արցախի հիմնադրամի «գարգացման» փորձերին. «Կխոսանան լայն, գեղեցիկ ինքնավարություն, հետո կոչնչացնեն: Պատմությունն անվտանգության համար ստեղծել է մի երեխի՝ անկախ պետականությունը»:

Սգո երթի եւ հուշ-երեկոյի մասնակիցներն ընդունեցին որոշում՝ ՀՀ Ազգային ժողովին, իշխանություններին ուղղված պահանջներով, որ ներկայացված էին փետրվարի 25-ին ժուռնալիստի տանը ՊՊ ֆոնդի նախաձեռնած ասուլիսում («Ազգ», 26 փետրվար, «Ցեղասպանությունը պետք է դատապարտվի»):

Հուշ-երեկոն ավարտեցին դերասանուհի Լալա Մնացականյանը, հեղինակային երգի կատարող էդուարդ Ավանյանը եւ «Կարոտի կռունկ» մանկական երգչախումբը, որն առաջին անգամ ներկայացավ հայ հասարակայնությանը (երգչախմբում ընդգրկված են զոհված ազատամարտիկների երեխաներ):

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՅԺ

ՀՀ արտգործնախարարի տեսակցությունները Ամերիկայում

Վաշինգտոնի ՀՀ դեսպանատնից ստացված ֆաքսը տեղեկացնում է, որ փետրվարի 26-ին ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը ելույթ է ունեցել Վաշինգտոնում Heritage Foundation-ի տված ճաշկերույթի ընթացքում, որտեղ ընկերության անունից հյուրին ներկայացրել է դոկտ. Արիել Քոհենը:

Արտգործնախարարը նախ քննարկել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանն ուղղված բանակցությունների ներկա վիճակը եւ անդրադարձել ԵԱՀԿ 1996 թվի լիսաբոնյան գագաթաժողովից հետո խաղաղության գործընթացում տեղի ունեցած լճացման գործոններին: Առաջինը. նշել է նա, այն է՝ որ Ադրբեջանը մինչեւ գագաթաժողովը հրաժարվում էր Հայաստանի հետ ուղղակի բանակցություններ անցկացնելուց: Առա այն, որ գագաթաժողովին Հայաստանն ստիպված է եղել վեստոյի ենթարկել վերջնական հայտարարագրի մի դարերությունը, որը կարող էր վնասել դեռ խաղալ Ղարաբաղի հետագա քաղաքական կարգավիճակի խնդրում: Գագաթաժողովից հետո հավելյալ բարդություններ են առաջացել Ադրբեջանի դատճառով: Վերջինս խիստ առարկել է Ֆրանսիայի Մինսկի խմբի համանախագահ նշանակելու առաջարկին, եւ միայն երկու ամիս տեւած բանակցություններից հետո որոշվել է ունենալ երեք համանախագահ հանձինս Ռուսաստանի, Միացյալ Նահանգների եւ Ֆրանսիայի:

Այնուհետեւ խոսելով Հայաստանի ներկա տնտեսական կացության մասին, որն Արզումանյանը շնորհակալություն է հայտնել Մ. Նահանգներին, վերջինիս ցուցաբերած մարդասիրական օժանդակության համար, բայց նշել է, որ ժամանակն է մարդասիրականից անցնելու երկրի զարգացմանը նպաստող օժանդակության, հատկապես տեխնոլոգիայի ներդրումների եւ որոշակի ծրագրերի մշակման բնագավառներում:

Հայաստանն, ասել է նա, ներդրումների համար նպաստավոր պայմաններ է ստեղծում վերանայելով առեւտրի, մաքսային եւ իրավական կանոնադրություններն ու օրենքները:

Անդրադառնալով հայ-իրանական հարաբերություններին, արտգործնախարարը նշել է, որ հասկանալով հանդերձ այդ հարցում Ամերիկայի մտահոգությունները, Հայաստանն այլընտրանք չունի, քանի որ Թուրքիան շարունակում է շրջափակումը: Տնտեսական զարգացման հեռանկարներ կարող են խոստումնալից լինել, եթե Թուրքիան վերացնի շրջափակումը: Դրանից կշահի նաեւ ինքը Թուրքիան:

Նա հավաստիացրել է, որ Հայաստանն իրոք ժողովրդավարական երկիր դառնալու ուղին է բռնել, սակայն ընթացքում սխալներն անխուսափելի են: Այժմ, նշել է նա, միջազգային մասնագետների հետ համագործակցելով Հայաստանի կառավարությունը բարեփոխում է օրենսդրությունը եւ ընտրությունների մասին օրենքը համապատասխանեցնում միջազգային մակարդակներին:

Ինչ վերաբերում է Կասպից ծովի նավթատար խողովակաշարի հարցին, արտգործնախարարը կտրակատեղես մերժել է այն կապել Ղարաբաղի հարցի լուծման հետ:

Նույն օրը, փետրվարի 26-ին, դարձեալ Արզումանյանը ունեցել է նաեւ մի շարք այլ պաշտոնական հանդիպումներ:

Հանրաքեսությունում շահագործվում է 173 հանրավայր

Մեր երեկվա համարում, Արմենպրեսի հաղորդմամբ լույս տեսած «Հանրաքվեության 225 հանրավայր օգտագործվում է անօրինականորեն» վերնագրով նյութի վերաբերյալ հանրաքվեության երկրաբանամարկետինգային վերահսկողական ծառայության պետ Արշակ Սրբոյանը խմբագրություն զանգահարեց եւ նշեց, որ հանրաքվեությունում գոյություն ունեցող 400 հանրավայրերից, որոնց պարտադիր հասցեները հաստատված են, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից շահագործումն արտոնագրված է 173 հանրավայրերի: Մնացյալներից 80-ը պայմանագրեր են կնքել, իսկ եւս 7 հանրավայր այժմ պայմանագիր կնքելու գործընթացի մեջ է գտնվում: Այսպիսով 400 հանրավայրերից 227-ը դեռեւս չի շահագործվում: Դրանք ռեզերվային հանրավայրեր են:

Պատերազմի ժամանակ 15 հազար հայ է ծառայել ԱՄՆ բանակում

«Մեծարես գնահատելի է հայերի նպաստը Ամերիկայի զինծառայությանը: Խաղաղասեր ժողովուրդ լինելով հանդերձ, հայերը միշտ էլ ոտքի են կանգնել, երբ իրենց ազատությունն ու գոյատեւումը դրվել են հարցականի տակ», ասել է վետերան գնդավար Ռոնալդ Մարգարյանը, որն անդրադարձել է Միացյալ Նահանգների զինծառայության պատմության մեջ հայերի մասնակցությանը: վերջերս Օրենջի (Կալիֆորնիա) Սուրբ Վարդան հայկական եկեղեցում տեղի ունեցած վետերանների օրվա տոնախմբության ժամանակ:

Ներկա են եղել Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 13 ամերիկահայ զինծառայողներ, որոնք գնդակոչի առաջին իսկ օրվանից պատրաստակամություն են հայտնել պայքարելու հանուն ազատության եւ խաղաղության ամբողջ աշխարհում:

Ըստ «Արմինյոն Միրոր Սիթիբեյ բրդ» շաբաթաթերթի փետրվարի 15-ի համարում այս մասին տպագրված հոդվածի, Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին մոտ 15 հազար հայեր են ծառայել ամերիկյան բանակում: Սա պատկառելի թիվ է, նշում է հոդվածագիր Դուգ Սենգը, հաշվի առնելով, որ այդ ժամանակ ընդամենը 210 հազար հայեր էին ապրում ԱՄՆ-ում:

Լեյտենանտ Ռիչարդ Դեմիրջյանն ու առաջին կարգի օդաչու Նուբար Դոմբելեկյանը ներկայացրել են հավաքի մասնակից վետերաններին, որից հետո օրվա գլխավոր բանախոս գնդապետ Ջորջ Ժուսկալյանը խոսել է հայ զինծառայողների խիզախության եւ նվիրվածության մասին: Այդ արժանիքների համար ամերիկյան բանակում ծառայած հայազգի վետերաններից ոմանք պարգեւատրվել են շքանշաններով: Էռնեստ Դեռլիքյանը, օրինակ, արժանացել է «Կոնգրեսական պատվո մեդալի», որն ամենարարձր զրանցումն է: Վիկտոր Մաղաքյանը արժանացել է «Նավատորմի խաչ», երկու արծաթե աստղ, մեկ բրոնզե աստղ, ինչպես նաեւ երկու «Մանուշակագույն սիրտ» շքանշանների:

Հավաքի առիթով գոհունակությամբ է նշվել, որ Ռիչարդ Դեմիրջյանն ավարտել է իր զինակիցներին նվիրված «Հաղթանակ եւ փառք, Երկրորդ աշխարհամարտի հայ հերոսներ» խորագրով գիրքը, որտեղ հեղինակը հետաքրքրել է երկու նպատակ: Նախ տեղեկություններ հաղորդել այդ վետերանների մասին, որպեսզի նրանց եւ աղագա սերունդները, ըստ ամենայնի, ճանաչեն ու գնահատեն կատարվածը, եւ երկրորդ ցույց տալ այն շերտ կառը, որ ստեղծվում է հայերի միջեւ, երբ նրանք պատահաբար հանդիպում են մեկը մյուսին աշխարհի ցանկացած մասում: Գրքի առաջաբանը գրել է հայտնի դիվանագետ գնդապետ Բարրի Զորյանը:

Երեկոն ավարտվել է բոլորի կող մից երգված «Ամերիկա» հիմնով:

ՏԱՄԱՌՈՏ

Աժ նախագահը մեկնեց Սանկտ Պետերբուրգ

ԵՐԵՎԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես հայտնեցին Աժ մամուլի ծառայությունից, Անկախ պետությունների համագործակցության միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի նիստի աշխատանքներին մասնակցելու համար փետրվարի 27-ին Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը մեկնեց Սանկտ Պետերբուրգ:

Հայաստանում կբացվի Լիբանանի Հանրապետության դեսպանատունը

ԵՐԵՎԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Լիբանանի Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել Հայաստանում դեսպանություն բացելու վերաբերյալ: ՀՀ ԱԳՆ հասարակայնության եւ մամուլի հետ հարաբերությունների վարչությունից տեղեկացնում են, որ նշանակված է ՀՀ-ում Լիբանանի գործերի ժամանակավոր հավատարմատար, որը մոտ ապագայում կժամանի երեւան՝ դեսպանության բացման հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով:

IFES-ի նախաձեռնությամբ քննարկվում է ընտրական օրենքը

Փետրվարի 27-ին «Անի» հյուրանոցի համաժողովների դահլիճում կայացավ ԱՄՆ-ի ընտրական համակարգերի միջազգային հասատության (IFES) նախաձեռնած ընտրական օրենքին նվիրված ֆորումը: Մասնակիցների թվում էին քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, Ազգային ժողովի պետահրավական հանձնաժողովի, ԿԸՀ-ի ներկայացուցիչներ, լրագրողներ: Ֆորումին ելույթ ունեցավ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Պիթեր Թոմսենը: Ֆորումի մասին առավել ամբողջական պատմող նյութը՝ «Ազգ»-ի վաղվա համարում:

Ն. Պ.

Հայկական համագումարը գրասենյակ է բացում Ղարաբաղում

«Մենք մեծապես գնահատում ենք Լինսի հիմնադրամի առաջադեմ նվիրատվությունը, որը հնարավոր կդարձնի Լեռնային Ղարաբաղում ավելի ընդլայնված ծրագրերի մշակումը», նշել է Հայկական համագումարի հոգաբարձուների վարչության նախագահ Հրայր Հովնանյանն այդ հիմնադրամից դրամական նոր նվիրատվության առթիվ: Այս մասին Ամերիկայի հայկական համագումարի կենտրոնական գրասենյակից ստացված ֆաքսը տեղեկացնում է, որ կազմակերպությունը պատրաստվում է Ստեփանակերտում գրասենյակ բաց անել մարդասիրական օժանդակության ջանքերին նպաստելու համար: Նախատեսվում է նաեւ հետագայում համապատասխան դարաբաղյան գրասենյակ բացել Վաշինգտոնում՝ տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու Ղարաբաղի կառավարությանը: «Նվիրատվությունը ճիշտ ժամանակին է կատարվել, քանի որ Ղարաբաղը հայտնված է դիվանագիտական մեկուսացման մեջ», ավելացրել է Հովնանյանը:

Տրադարի խախտում Տավուշի մարզում

ԵՐԵՎԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Հրադարի նոր խախտում է արձանագրվել հայ-ադրբեջանական սահմանի հյուսիս-արեւելյան հատվածում: Փետրվարի 26-ին՝ ժամը 18:45-ից մինչեւ 23:00-ն ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները հրազենային տարատեսակ զենքերից գնդակոծել են Տավուշի մարզի Չինարի բնակավայրի պատշտպանական դիրքերը: Միջադեպի արդյունքում տուժածներ չկան: Հայաստանի զինված ուժերի պատասխան գործողություններից հետո, հակառակորդը դադարեցրել է կրակը: Հայ-ադրբեջանական սահմանի մյուս հատվածներում փետրվարի 26-ի երեկոյան եւ փետրվարի 27-ի առավոտյան այլ միջադեպեր չեն արձանագրվել:

Ուսումնական հավաքները անհիմն լուրերի պատճառ

ԵՐԵՎԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: ՀՀ ՊՆ լրատվության եւ մամուլի վարչության պետի տեղակալ Հովիկ Չարխչյանը տեղեկացրեց, որ վերջին շրջանում Երեւանում համառորեն շրջող լուրերը պատերազմական գործողությունների վերսկսվելու եւ ենթադրվող եռամսյա զորահավաքների մասին որեւէ հիմք չունեն: Հ. Չարխչյանի կարծիքով, այդ լուրերի տարածման համար հիմք է ծառայել այն հանգամանքը, որ վերջերս տեղի են ունեցել ուսումնական հավաքներ, որոնք կանոնավոր գործող բանակի համար ամեն տարի պարտադիր անցկացվող միջոցառումներից են: Ըստ Հ. Չարխչյանի, անցյալ շաբաթ նման հավաքներ են անցկացվել Արարատի, Մասիսի եւ Եղեգնաձորի շրջաններում: Թերեւս սա է պատճառ հանդիսացել արագորեն տարածվող անհիմն լուրերի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941 AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Էլեկտրաէներգիա. Սակագնի «իդեալը»՝ 25 դրա՞մ

Էլեկտրաէներգիայի սակագնի վերջին բարձրացումն ամենեին էլ վերջինը չէ, եւ բնակչության վճարունակության ենթադրվող բարելավմանը զուգընթաց ասելիանաբար հասելու է 25 դրամի սահմանագիծը, որն էլ էներգետիկայի նախարարության ղեկտնյաների ամենահամեստ հաշվարկներով, կազմում է էլեկտրաէներգիայի իրական ինքնարժեքը: Այս առիթով, սակայն, տարակարծություններ շարունակվում են, ասելով եւս, որ ինքնարժեքի մասին բնակչության շրջանում ղեսվող խոսակցություններին (որոնց համաձայն այն չի գերազանցում 8 դրամը) ավելանում են մասնագետ էներգետիկների ղնդումները էլեկտրաէներգիայի սակագնի վերջին թռիչքի անհիմն լինելու մասին: Այսպես, «Առավոտ» օրաթերթը (6 փետրվարի, «Գները սխալ են հաշվարկված», ղնդում է նախկին Հայէներգոյի ղեսը) կասկածի տակ էր դնում սակագնի հաշվարկը. «Կասկածում եմ, որ հաշվարկ՝ չի կատարվել, այլ ընդամենը հասատված սակագներին թվերի հարմարեցում, այն էլ կողմից մասնագիտական սխալներով»: Մինչ այդ, փետրվարի 5-ին, սակագների մասին «ղաշտոնական եւ անկախ մասնագետի» (Էներգետիկայի նախարարության տնտեսագիտական վարչության նախկին ղես Սվետլանա Թավաֆալյանի) տեսակետներին հակադրվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը. Վերջինիս կարծիքով, էլեկտրաէներգիայի ինքնարժեքի ձեւավորման գործոնները (վառելիքի մասնաբաժին, վերանորոգման ֆոնդեր եւ սարքավորումների շահագործման ծախսեր) չեն արդարացնում սակագնի հերթական բարձրացումը: Մասնավորապես վկայակոչվում էր ամենավառելիքատար, ըստ այդմ բանկարժեք էլեկտրաէներգիայի ՋԷԿ-երի արտադրանքի ծավալի կտրուկ կրճատումը 1997 թ. ընդհանուր արտադրանքում (37 տոկոս նախորդ տարիների 60-80 տոկոսի փոխարեն):

Նկատի առնելով բնակչության մի հսկա սոցիալապես անպաշտպան զանգվածի զգայուն ուշադրությունն այս ավելի քան կենսական խնդրի նկատմամբ, էլեկտրաէներգիայի ինքնարժեքի եւ սակագնի «փոխհարաբերությունները» փորձեցինք ղարզել էներգետիկայի նախարարությունում, ուր հիշեցրին էներգետիկ բարեփոխումների վերջին երկու տարիների ձեռքբերումները, համակարգային բարեփոխումներ, գրեթե շուրջօրյա էներգամատակարարում, հովհարային անջատումների խստագույն գրաֆիկի, ծախս լարանցումների սարդոստայնի փոխարեն, վճարումների մակարդակի նկատելի բարձրացում մոտ 80 տոկոս նախորդ տարիների 30 տոկոսի փոխարեն, Սեւանա լճի ջրային ռեսուրսների զգալի տնտեսում (ներկայումս լճի ջուրն օգտագործվում է միայն ոռոգման նպատակով): Այս ամենը՝ համակարգի տեխնիկական ողբալի վիճակի, մոտ 3 մլրդ ամերիկյան դոլարին համարժեք հիմնական ֆոնդերի քայքայման պայմաններում, որ վտանգում էր էներգետիկ համակարգի պարզ վերարտադրությունը: 1996-ին Համաշխարհային բանկի տրամադրած վարկերի, միջազգային կազմակերպությունների օգնության շնորհիվ էներգահամալիրի անկառավարելի վատթարացումը որոշ չափով հաջողվել է կասեցնել, սակայն համակարգի բնականոն շահագործման, ընթացիկ եւ կապիտալ վերանորոգումների, էլեկտրաէներգիայի արտադրության, փոխանցման եւ բաշխման համար անհրաժեշտ ներդրումների գլխավոր աղբյուրն էլեկտրաէներգիայի արտադրության համար ծախսված միջոցների վերադարձն է վճարումների միջոցով: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ էլեկտրաէներգիայի սակագինն առնվազն համադասասխանի իր ինքնարժեքին: Վերջինս գրեթե 25 դրամ է եւ հաշվի է առնում ոչ միայն վառելիքի, աշխատավարձերի վճարման, այլեւ նորոգման եւ շահագործման ծախսերը: Նախարարությունը կանգնած էր երկընտրանքի առջեւ. շարունակել էներգահամակարգի քայքայումը կամ հավասարակշիռ սակագնային քաղաքականությամբ ասելիանաբար բարելավել այն: Միջգերատեսչական հանձնաժողովի որոշումը, որի համաձայն վճարվում է 13 անկան դրամ մինչեւ 100 կվ.ժամ էլեկտրաէներգիայի համար, 20-անկան դրամ 100-ը գերազանցող յուրաքանչյուր կվ.ժամի համար (խոսքը վերաբերում է մինչեւ 0,4 կվոլտ լարման սպառողներին) եւ 17-անկան դրամ բարձր լարման սպառողների համար (արդյունաբերական ձեռնարկություններ եւ այլն), փաստորեն, միջանկյալ քայլ էր, փոխզիջումային տարբերակ սակագնի իրական արժեքի հասատմամբ ճանապարհին: Եթե հաշվի առնվի, որ յուրաքանչյուր ընտանիք ամսական միջին հաշվով սպառում է 250 կվ.ժ էլեկտրաէներգիա (չհաշված ծմեռային շրջանը), առայս կստացվի, որ բնակչությունը վճարում է մոտավորապես 17,2 դրամ իր ծախսած յուրաքանչյուր կվ.ժ հոսանքի դիմաց:

Սակագնի բարձրացումը պայմանավորված է մասամբ ՀԷԿ-երի արտադրանքի կրճատմամբ եւ պակասող էլեկտրաէներգիան ՋԷԿ-երի հաշվին լրացնելու իրողությամբ (ՀԷԿ-երի էլեկտրաէներգիան փոխադրողին է վաճառվում 2-3 դրամով, ՋԷԿ-երինը 12 դրամով եւ ԱԷԿ-ինը 7-8 դրամով): Ըստ որում, իրացնող ձեռնարկություններն համար սահմանվում են տարբեր սակագներ՝ կախված վերջիններիս ծառայությունից օգտվող սպառողի կառուցվածքից (մեծածախ կամ բարձրավոլտ սպառողներ, 50 տոկոս զեղչից օգտվողներ, բյուջետային հիմնարկությունների թիվը, զինմասերի առկայությունը, որոգման նպատակով օգտագործվող ջրի քանակը եւ այլն), քանի որ նշված դեպքերում, ինչպես նաեւ աղեսի գոտում եւ սահմանամերձ շրջաններում, համակարգի ես բերած գումարների տոկոսը շատ է: Եթե ավելացվեն 13 դրամով վճարվող մինչեւ 100 կվ.ժամերը եւ արտադրող-փոխադրող-իրացնող-սպառող ճանապարհին առկա բնական կորուստները, որ էլեկտրացանցի մաշվածության պատճառով զգալիորեն գերազանցում են 15 տոկոսը, ապա ստացվում է, որ նույնիսկ 100 տոկոս վճարումների դեպքում յուրաքանչյուր կվ.ժամի դիմաց էներգահամակարգին վերադարձվում է ոչ ավել, քան 13-14 դրամ: Արդյունքում, միջգերատեսչական հանձնաժողովի տվյալներով, միջոցների ճեղքվածքը լավագույն դեպքում (այս տարվա համար) կկազմի 58 մլն դոլար: Վերջինս նախատեսվում է «փակել» վարկային ներդրումների, տեխնիկական եւ մարդասիրական օգնությամբ ակնկալվող ֆինանսական ռեսուրսների եւ պետբյուջեից համակարգի զարգացման համար հատկացվելիք 8 մլն դոլարի չափ ներդրումների միջոցով: Այս անտրամաբանական իրավիճակը մեղմելու համար պետբյուջեի նախագծով սակագնի նոր բարձրացում է նախատեսվում արդեն իսկ այս տարվա երկրորդ կիսամյակում:

Ընդհանրապես մոտենալով այս պարզաբանումներին եւ էներգահամակարգի առջեւ ծառացած խնդիրներին, նկատենք, որ սակագնի նոր բարձրացումը, որ, հակառակ էներգետիկների սպասելիքներին, հակասելու է քաղաքացիների ընտանեկան բյուջեի հնարավորություններին (վերջինս այսոր արդեն երեում է դրամի սահող արժեզրկումից), կարող է ի չիք դարձնել հանրապետության էներգետիկների գլխավոր ձեռքբերումը՝ շուրջօրյա էներգամատակարարումը, վերադարձնելով մեզ հարաբերական խավարի երեցս անիծյալ թաղավորությունը:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Դիլիջանի ժողդատարանը անվավեր է ճանաչում Վանաձորի քաղաքապետի ընտրությունը

Օրերս Դիլիջանի ժողդատարանը անվավեր է ճանաչել անցյալ տարվա նոյեմբերի 24-ի Վանաձորի համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքները: Մանրամասները պարզելու համար դիմեցինք Վանաձորի համայնքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արշավիր Ղուկասյանին: Նա ասաց, որ Լոռու մարզային եւ Վանաձորի համայնքային ընտրական հանձնաժողովները որպես պատասխանող կողմ պատրաստվում են Դիլիջանի ժողդատարանի կայացրած վճռի վերաբերյալ ներկայացնել վճռաբեկ գանգատ: ՀՀ Գերագույն դատարանը ներկայիս ժամկետում պետք է անդրադառնա այդ խնդրին եւ կայացնի վճիռ: Եթե Գերագույն դատարանը բեկանի Դիլիջանի ժողդատարանի որոշումը, ապա Վանաձորի համայնքային ընտրական հանձնաժողովի՝ Անդրանիկ Հարությունյանին քաղաքապետ ընտրելու մասին որոշումը կմնա ուժի մեջ: Իսկ եթե չբեկանի, Գերագույն դատարանի վճիռը կայացնելուց հետո երկաբաթյա ժամանակահատվածում պետք է անցկացվի նույն թեկնածուների վերաքվեարկություն: Մինչեւ Գերագույն դատարանի կողմից որեւէ վճռի կայացումը ուժի մեջ է մնում համայնքային ընտրական հանձնաժողովի որոշումը:

ՍԱՆՎԵԼ ՄԻՒՈՅԱՆ
Վանաձոր

Նվազել է կտակների թիվը

ԵՐԵՎԱՆ, 24 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Վերջին շրջանում զգալիորեն կրճատվել է կտակների թիվը: Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության նոտարիատի վարչության պետ Մ. Գաբրիելյանի, դա պայմանավորված է այդ կապակցությամբ վճարվող գումարների չափի ավելացմամբ: Ըստ տեղեկատվության, նախկին 10 դրամի փոխարեն դա այժմ դարձել է 10 հազար դրամ: Մ. Գաբրիելյանի կարծիքով, դա բավականին մեծ գումար է, ինչը շատ բոլորի հնարավորություն չի տալիս կտակներ կազմել:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ Աժ նստաշրջանը ավարտեց աշխատանքը

«Արդարություն» խմբակցության առաջարկը դարձյալ մերժվեց

ԼՂՀ Աժ նախագահ Արթուր Թովմասյանին անվստահություն հայտնելու մասին հարցի բավականին լարված քննարկումներից հետո խորհրդարանը փետրվարի 26-ին գումարեց եռօրյա աշխատանքների եզրափակիչ նիստը: Պատգամավորները ձեռնամուխ եղան 95-96 թթ. առեւտրի, հասարակական սննդի, վարձակալվող մակերեսների, բնակչության կենցաղսպասարկման եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ աղաքաղաքացիական ծրագրերի մեջ փոփոխություններ մտցնելու մասին հարցի քննարկմանը: Պատգամավոր Սերգեյ Արզումանյանը շարադրեց կրթության, գիտության եւ սոցիալական հարցերով հանձնաժողովի տեսակետը մի շարք օբյեկտների սուբսիդման մասին, որոնք, ըստ հանձնաժողովի, պետք է հանվեն սեփականաշնորհման ծրագրից: Առաջարկությունն ընդունվեց: Հիշյալ հարցը տեղափոխվեց հաջորդ նիստերի քննարկմանը:

Այնուհետեւ ԼՂՀ Աժ-ն ընդունեց պատգամանության եւ անվտանգության հանձնաժողովի առաջարկությունը՝ լրացումներ մտցնելու զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովման մասին օրենքում: Ըստ այդ առաջարկության, ԼՂՀ պատգամանության ժամանակ ընտանիքի երկու եւ ավելի անդամների կամ միակ կերակրողի զոհվելու դեպքում սոցիալական կենսաթոշակը վճարվում է ծնողներին՝ անկախ նրանց տարիքից եւ աշխատանքի բնույթից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ-ում բացակայում է իրավախախտումների համար վարչական պատասխանատվության մասին օրենքը, խորհրդարանը որոշում ընդունեց ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների նորմալ գործունեությունը խոչընդոտող իրավախախտումները վերացնելու նպատակով ԼՂՀ կառավարությանը համապատասխան լիազորություններով ժամանակավորապես օժտելու եւ վարչական պատասխանատվություն սահմանելու մասին:

Նիստերի ընթացքում ուշագրավ էր խորհրդարանի աշխատանքը ռադիոյով կամ հեռուստատեսությամբ ուղիղ եթեր արձակելու մի շարք պատգամավորների, մասնավորապես՝ «Արդարություն» խմբակցության անդամների պահանջը: Նախաձեռնողների կարծիքով, խորհրդարանը վաղուց պետք է դիմեր այդ քայլին, որպեսզի «ժողովուրդն ինքը տեսնի, թե ով ով է եւ ինչով է զբաղված խորհրդարանում»: Ի զարմանս լրագրողների, այդ առաջարկությունը նույնպես մերժվեց ԼՂՀ Աժ ղեկավարության կողմից: Սրանով Աժ նստաշրջանը ավարտեց աշխատանքը:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Ստեփանակերտ

ՏԱՐՕՐԻՆԱԿ

Կար-չկար, մի աշխատանքային օրենսգիրք կար. Կա՞ր, թե՞ չկար

«Ամարաս» տպարանը վերջերս լույս է ընծայել «ՀՀ աշխատանքային օրենսգիրք»-ը: Նախաձեռնությունն ինքնին ուշագրավ է. «աշխատանքային ճակատում» ստեղծված քաոսային իրավիճակում, երբ հողը, թվում է, փախչում է հանկարծահաս ուկեայացումից շփոթված, ինչ-որ տեղ դեռեւս աշխատավոր մարդու ոտի տակից, այս հրատարակությունն, անշուշտ, կարող է օգնել ոչ միայն վերհիշելու սեփական իրավունքները, այլեւ փորձելու դիմակայել սեփականաշնորհման ջրերում սովորական դարձած մեծ ու փոքր չափի վարչական կամայականություններին: Սակայն... բացում ես օրենսգրքի առաջին էջը եւ զարմանքով հայտնաբերում, որ «հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ոչնչացրեց շահագործման ու ճնշման կարգերը», եւ, որ շատ ավելի հետաքրքիր է, «ԽՍՀՄ-ում, որի կազմի մեջ մյուս հանրապետությունների հետ կամավոր միավորման ե՛ւ իրավահավասարության հիմունքով մտնում է Հայաստանի Հանրապետությունը, աշխատանքի կազակերպման հիմքը կազմում է սոցրալիստական սեփականությունը»: Մի պահ անակնկալի ես գալիս. արդեսաց ել լեթարգիական քնի՞ց, որի ընթացքում Հայաստանի երրորդ (անկախ) հանրապետության հուզիչ երազն ես տեսել, թե՞... «Ա՜յ քեզ բան», մտածում ես, ու շարունակում կարդալ. «յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի», «ով չի աշխատում, նա չի ուտում» հեռացած ու մոռացված դրույթների, սոցիալիստական մրցության եւ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի, կոմունիզմի կառուցման նախադայմանների մասին, վիրհիշում «խորհրդային պետությունում ազգությունների հավասարության դերը», ԽՍՀՄ-ում ազգաքաղաքացիների հավասարությունը՝ սկսկախ ազգությունից, ասասայից եւ, իհարկե, սեռից: «Անհարմար բան ստացվեց, մտածում ես, այսպիսի օրենսգրքով ինչպե՞ս պատասխանես փխրուն աշխատանքային իրավունքներդ, այն էլ «ըստ ամենայնի», ինչպես խոստանում է փաստաթղթի առաջին հոդվածը»:

Այնուհետեւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում հաճախ հանդիպում ես «ԽՍՀՄ եւ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան...» բառակապակցությանը, որից հետո սովորաբար նշվում է տվյալ հոդվածի վերջին խմբագրության տարեթիվը՝ որպես կանոն մինչեւ 1988 թվականը (ստացվում է, օրինակ, որ 1980 թվականին Հայաստանում գործել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը): Սա զարմանալի չէ, քանզի 88-ից հետո մեր պետական այրերը ՀՀ աշխատանքային օրենսդրությանն անդրադառնալու ժամանակ (գուցե, նաեւ ցանկություն) չեն ունեցել. անելիքները շատ են, իսկ աշխատանքային հարաբերությունների կարգավորումը խելոք է, կսպասի: Ուստի ՀՀ-ում առայժմ գործում է (եթե, իհարկե, գործում է) Հայկական ԽՍՀ աշխատանքային օրենսգիրքը: Հասկանալի է նաեւ անհեթեթության «մեխանիզմը». ինչ-որ մեկը վերաձեւել է Խորհրդային Հայաստանից մնացած ժառանգությունը, «Հայկական ԽՍՀ» բառերը բարեխղճորեն փոխարինել «Հայաստանի Հանրապետություն»-ով եւ, բավարարված տնաջան աշխատանքի արդյունքից, հանձնել հրատարակչի ողորմածությանը: Մինչդեռ, սոցիալիստա-կապիտալիստական օրենսդրության այս շիլափլավը եփելու փոխարեն կարելի էր, նույնիսկ պահպանելով օրենսգրքի առաջաբանը՝ Խորհրդային պետության, սոցիալիզմի եւ կոմունիզմի կառուցման հիմնադրույթներով օրենսգիրքը կոչել իր իսկական անունով՝ «Հայկական ԽՍՀ աշխատանքային օրենսգիրք», եւ ծանոթագրությամբ (կամ որեւէ այլ կերպ) ընթերցողին բացատրել, որ վերջինս ուժի մեջ է, քանի դեռ ընդունված չէ ՀՀ համապատասխան փաստաթուղթը՝ այսպիսով, խուսափելով զավեշտական իրավիճակում հայտնվելուց: Թե չէ, ստացվում է մոտավորապես այսպես, «լինում է, չի լինում, ոչինչ չի լինում: Միայն մի գդալ է լինում, այդ գդալն էլ չի լինում: Մեկ էլ մի ինքնաթիռ է լինում: Այդ ինքնաթիռը գնում է, որ նստի մի բազկաթոռի, բայց ընկնում է ցած ու ջարդվում: Իսկ բազկաթոռը չկա, բայց ինքնաթիռը կա: Ինքնաթիռը լաց է լինում, ինքնաեռը չի եռում...»:

Է. Պ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

խորհրդակցություն

Կայուրության անկումը

Անցյալ տարվա դեկտեմբերին լրացավ Բելովեժյան համաձայնությունների ստորագրման հինգ տարին, որոնք վերջ տվեցին ԽՍՀՄ-ի գոյությանը: Զանգվածային լրատվության միջոցները լայնորեն անդրադարձան համաշխարհային պատմության մեջ երջադարձային այս տարեդարձին: Մի քանի ամիս շարունակ «Սովետսկայա Ռոսիա» թերթը տպագրեց Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի պատգամավոր Վլադիմիր Խասկովի հանգամանալից ուսումնասիրությունը, որն իր աշխատությունը անվանել է «Ո՞վ եւ ինչպե՞ս քանդեց իմ երկիրը» հարցադրումով: Հեղինակը հետազոտել էր արխիվային վավերագրեր, որոնցից շատերը առաջին անգամ էին հրապարակվել: «Ուրարտու» ռուսալեզու թերթը վերատպել է Խասկովի ամբողջ նյութը Զորի Բալայանի ներածականով եւ վերջաբանով: Հաշվի առնելով, որ մեր մշտական հեղինակի մեկնաբանություններն անմիջականորեն առնչվում են Հայաստանի Հանրապետության եւ Արցախի արդի հիմնախնդիրներին, «Ազգը» նպատակահարմար գտավ հայ ընթերցողին ներկայացնել վերջաբանը:

են» իրենց ժողովուրդները: Չարժե թվարկել նրանց անունները:

Նախ, չի կարող լինել այնպես, որ նրանք բոլորը մեղավոր լինեին «իրենց երկրները» քանդելու մեջ, որ պատմությունը հանկարծ մեկիկ-մեկիկ ընտրեր այդ երկվորյակ եղբայրներին, ովքեր նույնպիսի դաժանությամբ մարդու մեջ սպանել են մարդկայինը, ժողովրդի մեջ՝ ժողովրդականը:

Ես, օրինակ, ամենեւին չեմ վիրավորվում իմ կոմունիստ բարեկամներից (կամ, իրենց կարծիքով՝ նախկին բարեկամներից, երբ նրանք մեղադրում են ինձ «հակակոմունիստական ելույթների» համար, մասնավորաբար՝ նկատի ունենալով «Ժողովի եւ դրախտի միջեւ» գրքիս որոշ էջերը): Նրանցից շատերին առաջվա պես հարգում եմ, իհարկե, չմոռանալով մի իմաստունի՝ աշխարհի նման հին բացականչությունը. «Պլատոնն իմ բարեկամն է, սակայն ճշմարտությունը ավելի թանկ է»: Իսկ ճշմարտության չափանիշն, ինչպես հայտնի է, պրակտիկան է, որը ցույց է տվել, որ սոցիալիզմը ոչ մի տեղ չարմատակալեց: Ո՞վ գիտի, գուցե երբեւէ մարդկությունը տակավին կանդրադառնա Ազատության, Հավասարության եւ Եղբայրության մասին խիստ գրավիչ կարգախոսներին՝ սոցիալիզմի գաղափարները վերստին կենսագործելու համար: Միայն թե՝ բավարարվե՛ք առանց ժողովրդի գլխին պարտվող փորձարկումների: Եվ հետո՝ իշխանությա՛ն եկե՛ք խուսափելով ցնցումներից ու հեղափոխություններից: Քանզի հեղափոխության դարաշրջանում երկրով մեկ շրջում է մահվան ուրվականը՝ ինչպես համաճարակի ժամանակ:

Թվում էր, մենք արդեն անցել եւ ապրել ենք այս բոլոր «դարաշրջանները» ու «գործընթացները»: Եվ, կարծես, մենք արդեն շատ նվաճումներ ենք ունեցել, որոնց մասին անդադար ասում էինք ու կրկնում. «Միլիոնանոց երեւանը՝ իր Մաստենադարանով ու մետրոպոլիտենով, տարեկան ութսուն հազար նորածին, մշակույթի, ճարտարապետության, գեղեցկության, կամքի, ոգու վերածնունդ եւ զարգացում»: Բայց, ընդսմին, մենք չէինք կարող չտեսնել, որ ապրում էինք կեղծիքի մեջ: Որ իշխանությամբ «գուրգուրված» եւ մեդալներով ու շքանշաններով զարդարված հինգ հազար մարդ կանգնած ծափողջունում են մարազմաշիկ Բրեժնեւին կամ կենդանի դիակ Չեռնենկոյին՝ «միաձայն» ընտրելով սրանց մեծ երկրի առաջնորդների պատշոնում: Մի տես՝ Չեռնենկոն զեկուցում է անում մբերային ծրագրի մասին, որն, ի դեպ, որպես այդպիսին երբեմ գոյություն չի ունեցել սովետական իշխանության գոյության ամբողջ ընթացքում: Եվ տեղի ունեցավ ամենաահավորը. անծայրածիր տերությունը հացը գնում էր՝ տալով փոխարենը նավթ ու ոսկի: Այլեւս ոչինչ չէր կարող փրկել նրան: Ոչ հաղթանակի զորահանդեսը, ոչ՝ Գագարինի թռիչքը, ո՛չ՝ անվճար կրթությունն ու առողջապահությունը, ոչ՝ բալետը, ոչ՝ հոկեյը եւ ոչ էլ՝ իմ հարազատ «Լիտերատուրնայա գազետան», որին վիճակված էր դառնալ «պերեստրոյկայի» նախագուշակը: Ողջ սոցիալիստական ճամբարի էկոնոմիկան, իր պետականացված «բազիսով եւ վերնաշենքով», թեմ պատ էր հիշեցնում, որը մի թեթեւ հրումից ամեն պահի կարող էր փուլ գալ: Այս մասին քաջ գիտեին Ալեն Դալլեսը եւ Ուիլյամ Քեյսին: Նրանց միայն մնում էր որոնել ու գտնել այդ «հրողներին»:

Բարեբախտորեն՝ «հնամաշ» տիրակալ առաջնորդներն՝ իրենց գրեթե յուրաքանչյուր քայլով, հենց այն մարդկանց ջրաղացին էին ջուր լցնում, ովքեր շատ էին ուզում քանդել ԽՍՀՄ-ը: Հունգարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Աֆղանստան. այս ամենը փաստակներ են ոչ թե առանձին առաջնորդների, այլ՝ գաղափարախոսության, հասարակարգի դեմ: Երբեմ չեմ մոռանա, թե օլիմպիական, նահանջ 1980 թվականի ամենասկզբից ինչպե՞ս համարյա ամբողջ երկրագունդը միահամուռ բոյկոտեց Մոսկվայի օլիմպիադան: Աշխարհն այդ կերպ պատասխանեց խորհրդային զորքերի մուտքին Աֆղանստան: Ստեղծվեց առավել բարենպաստ ֆոն, որպեսզի, ինչպես ասում են՝ բոլորը մեկի նման, վրա տային ԽՍՀՄ-ին՝ պինդ կառչելով այն «աֆիլլեսյան գարշապարից», որպիսին «էկոնոմիկայի խաթարված դրսեւորում հանդիսացող լենինյան քաղաքականությունն» էր: Այնպես որ, երկիրը դրանից էլ ավելի քանդելը արդեն տեխնիկայի խնդիր էր: Լիներ Գորբաչովը, կամ էլ ինքը՝ Ստալինը, վերադառնար Կրեմլ՝ միեւնույն է, պատը պիտի փուլ գար, ասենք՝ այն պատճառով, որ թեմ էր:

«Ով եւ ինչպես քանդեց իմ երկիրը» գրքի հարգելի հեղինակին խորհուրդ կտայի փոխել վերնագիրը: Քանի որ մեր երբեմնի ընդհանուր երկիրը ոչ թե քանդեցին, այլ... պայթեցրին: Նրա ընդերքի մեջ դանդաղ գործող արկ գաղտնադրեցին եւ վառեցին յոթանասուն տարուց էլ ավելի երկարություն ունեցող բիկֆորդյան ֆուղը:

Այստեղ, ինչպես երեւում է, պետք է այլ բանի մասին խոսել: Բուն երկրի մասին: Խոսելով իր հայրենիքի մասին՝ Վլադիմիր Խասկովը, բնականաբար, նկատի ունի ո՛չ թե Ռուսաստանը, այլ՝ խորհրդային Միությունը: Եվ թվում է, աշխատելով ձեռագրի վավերագրերի մի ամբողջ կույտի վրա, արտասովոր հետազոտողը չէր կարող չմտորել այն բանի մասին, որ այսօր «մեկը մեկին» բանաձեւով, այսինքն՝ միեւնույն սցենարով «ինչ-որ մեկը», «ինչ-որ ձեւով» քանդում է արդեն բուն Ռուսաստանը: Ճշգրիտ լինելու համար հարկ է ասել, որ քանդվում է նախկին ՌԽՖՍՀ-ն, որը, չգիտես ինչու, Ռուսաստան են անվանել, եւ որն ամբողջ նախահեղափոխական ռուսաստանյան պետության իրավահաջորդն է: Սակայն մի կողմ դնենք այս թեման, քանզի կարող է մեզ հեռու տանել:

Խոսենք «մեկը մեկին» բանաձեւի մասին: Հիշեցնեմ Խասկովի գրքում բերված պատշոնական վավերագրի մի դրվագ: Ընթերցողը պետք է միայն «ԽՍՀՄ»-ի կամ «խորհրդայինի» փոխարեն տեքստի մեջ մտցնի «Ռուսաստան»-ը կամ «ռուսական»-ը: Փաստաթուղթը կազմվել է 80-ականների կեսերին: «ԽՍՀՄ-ին անհրաժեշտ Արեւմուտքից ներմուծվող ապրանքների վճարման համար կայուն արժույթի աղբյուրներ հայթայթելու համար հնարավորությունն անգամ արդեն հիմա բարդացել է, իսկ ապագայում կարող է էլ ավելի դժվարանալ: Այս կացությունը հիմնականում առաջացել է նավթի արդյունահանման դադարեցման պատճառով... Նավթի գինը համաշխարհային շուկաներում կդառնա խորհրդային էկոնոմիկայի վիճակը որոշող առավել էական գործոններից մեկը»:

Իսկական թատրոն: Ժամանակի ընթացքում փոխվում են դերասաններն ու հանդիսականները, անփոփոխ է մնում միայն դասական ստեղծագործությունների բեմից հնչող տեքստը: Եթե առաջներում նավթի ու գազի մասին գրում էին գաղտնի փաստաթղթերում եւ զեկուցագրերում, այսօր այդ ամենը արվում է բացեիբաց: Եվ այսօր, երբ նախկին ռուսաստանյան կայսրությունը փշրվել է, ինչպես ասֆալտին տափակ ընկած հյելի, արդեն «օրինավոր» հիմքի վրա սեւ ոսկուց կարելի է սարքել կեղտոտ քաղաքականություն՝ ընդ որում, արհամարհելով ժողովուրդների ճակատագրերը: Ամենասկզբից հարկավոր էր ռուսներին «բզել», թե Ռուսաստանի նավթի պաշարները չնչին են, իսկ, ահա, ՌԽՖՍՀ պարագծի շուրջը՝ անսպառ են: Ամենեւին պատահական չէ, երբ «Սովետսկոյե սեկրետնո» հեռուստահաղորդման մեջ Արտյոմ Բորովիկը «անառարկելի տոնով» պնդում է, թե, իբր, Ռուսաստանի նավթը կհերիքի ոտից գլուխ քսան տարի, իսկ, ա՛յ, Ադրբեջանի պաշարները երկու հարյուր տարվա են: Ուստի, ասել, թե՝ Ռուսաստանն այսօր պետք է փրկության հայացք ձգի դեպի արեւելք եւ մտորի, թե իր շահերի համար ինչ քաղաքականություն վարի տարածաշրջանում:

Այդ ճանճրաշատ «շամպուների» մեջ այլեւս ոչ մի գաղտնի բան չկա: Մի կողմ դնենք այն, որ մասնագետների տվյալներով իրողությունը ճիշտ հակառակն է: Եվ քաղաքական գործիչները թվերն էլ ուռճացնում են միմիայն այն բանի համար, որպեսզի փաստարկեն այն խորամանկ միտքը, որով Բորովիկն ավարտեց իր, մեղմ ասած, տարօրինակ հաղորդումը. «Եթե առաջ համարում էին, որ Ադրբեջանը չի կարող ապրել առանց Ռուսաստանի, արդա այժմ հակառակն են պնդում»: Իսկ դա նշանակում է, եթե Ռուսաստանն ուզում է ազդել Ադրբեջանի վրա, որը նավթի «անսպառ» պաշարներ ունի, ուրեմն թող դուրս բերի Հայաստանից զորքերը եւ կացնով կտրի ղարաբաղյան հանգույցը: Եվ ոչ մի սարսափելի բան չկա, եթե մեկ-երկու տարի անց, ազատվելով «ղարաբաղյան» բեռից եւ հարմար պահ ընտրելով, Ադրբեջանը միաձուլվի Թուրքիային, որն արդեն այսօր, տեսնելով, թե ինչպես օրեցօր թուլանում եւ հյուծվում է Ռուսաստանը, նրա հետ խոսում է վերջնագրերի լեզվով՝ լինի դա Սերբիայի կամ Կիպրոսի կամ էլ հենց նույն Ղարաբաղի հարցում:

Դժվար չէ երեւակայել, թե ինչ կկատարվի Ռուսաստանի կենդանի աշխարհագրական քարտեզի հետ, եթե, սկսած այն օրվանից, երբ Ադրբեջանը, ինչպես ծրագրվել էր Աբաքուրի ժամանակ, հայտնվի Թուրքիայի կազմի մեջ: Անհույս գործ է ենթադրել, որ Ռուսաստանի հարավային սահմանը կանցնի գոնե Կովկասի լեռնաշղթայով: Հյուսիսային Կովկասի իրադարձությունները, որոնք էլ ավելի կուրվեն Անդրկովկասը վերջնականապես կորցնելուց հետո, վկայում են, որ այդ սահմանն անցնելու է անհամեմատ ավելի հյուսիսով: Եվ այդժամ առավել ադարդյուն կդառնան «Ո՞վ եւ ինչպե՞ս քանդեց իմ երկիրը» արդեն ծեծված հարցին հետազոտողների պատասխանելու փորձերը: Դեռ ավելին՝ հավանաբար նոր աշխատության վերնագրի մեջ հարկ կլինի մտցնել եւս մի բառ. «Ո՞վ եւ ինչպե՞ս վերջնականորեն քանդեց իմ երկիրը»:

Պետք չէ մեղավորներ որոնել հեռավոր Ամերիկայում, որն ունի սեփական ռազմավարական խնդիրներ եւ վարվելակերպի յուր տրամաբանությունը: Եվ ուստի զարմանալի չէ, որ նախագահ Բուշն ասել էր ազգային անվտանգության գծով իր խորհրդական Բ. Սքոուքրոֆտին. «Մարդ միշտ է մնում հայտարարի՝ ի՞նչ լավ կլիներ, եթե քանդվեր խորհրդային կայսրությունը»: Եվ ի՞նչ անհեթեթ կլիներ, եթե ԱՄՆ նախագահը հայտարարեր. «Ի՞նչ լավ կլիներ, եթե խորհրդային կայսրությունը... ամրապնդվեր»: Արդյոք, ճիշտ չէ՞ր լինի սեփական տան մեջ որոնել մեղավորներին: Ավա՜ղ, դրանք բյուրավոր են: Սակայն, իբրեւ օրինակ կարելի աչակցել գոնե այն բանի համար, որ իր պատճառով է քանդվել ԽՍՀՄ-ը: Այն, որ ռուսաստանյան ռազմական հենակայանի գոյությունը Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանին պատանդ է դարձնում՝ Լեռնային Ղարաբաղի հարցում Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության ղեկավարության կողմից շարունակվող դիմակայության պայմաններում: Այն, որ Հայաստանում ռուսաստանյան զորքերի մնալը հանգեցնում է Ռուսաստանի զինուժերի միջոցների փոշիացմանը (ինչպիսի՞ «նրբանկաս» արտացավություն): Այն, որ Պետդուման չպետք է վավերացնի Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ կնքված համաձայնագրերը, մինչեւ որ վերջինս կարգավորի ղարաբաղյան հարցը: Ի դեպ, բարձրաձայն արտահայտված բոլոր այս «ռոխլինյան» մտքերը համարյա բառ առ բառ մտել են «Հայաստանի Հանրապետությունում եւ Վրաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության ռազմական հենակայանների մասին» Պետական դումայի որոշման նախագծի մեջ:

Ինչպես ասում են, «տառապանքս փորձ ունի»՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այն անթիվ նիստերից... երբ քննարկում էին այս կամ այն որոշման նախագիծը: Ես սարսափել եմ հենց այն փաստից, որ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների մեծամասնությունը չէր մասնակցում քննարկմանը, քանի որ նյութին բացարձակապես չեն տիրապետել: Կարծում եմ՝ այս առումով դժվար թե որեւէ բան այժմ սկզբունքորեն փոխվել է: Եվ դժվար թե դիցուք՝ Պետդումայի պատգամավորները, նկատեն Ռոխլինի կողմից «նախագծի» մեջ ներդրված՝ Ռուսաստանի համար վտանգավոր այս գաղափարը: Պաշտպանության կոմիտեի նախագահն առաջարկում է Հայաստանից դուրս բերել զորքերը, որովհետեւ «դրանք չեն ապահովում ռազմական կազմավորումների օպերատիվ ծավալումը... ընդունակ չեն կատարելու առաջավոր տեղակայման զորքերի խնդիրները՝ տվյալ տարածաշրջանում ռազմական գործողությունների դեպքում»:

Բայց չէ՞ որ «դումայականներն» իրոք՝ միամտաբար կամ անփութորեն, կարող են քվեարկել մի փաստաթղթի օգտին, որն, ըստ էության, Անկարայի «պատրաստուքն» է: Քանզի, դժվար թե նրանք հիշեն, թե ինչպես իր «Հուշերում» մարշալ Վասիլեւսկին էր ընդգծել, Հիտլերի կարգադրությամբ Խորհրդային Միության վրա Թուրքիայի հարձակման ազդանշան պիտի դառնար Ստալինգրադի անկումը: Եվ այդ պատճառով է, որ Գերագույն հրամանատարի կենտրոնականացումը սիրված էր եղել Թուրքիայի հետ Հայաստանի եւ Վրաստանի սահմանում տեղաբաշխել խորհրդային զորքերի «պատկառազդու» միավոր, որն օդի պես անհրաժեշտ էր Արեւմտյան ճակատում: Չէ՞ որ մանկուրտները վտանգավոր են, քանզի, կորցնելով անցյալի հիշողությունը, ինքնաբերաբար զրկվում են նաեւ ապագայի համար անհանգստանալու փրկարար զգացմունքից: Այս ի՞նչ է կատարվում. Ռուսաստանի գեներալը, իմանալով (եթե՝ ոչ, էլ ի՞նչ գեներալ) Ռուսաստանի դեմ ուղղված պանթուրքիզմի չարագործ ծրագրերի մասին, առաջարկում է վերացնել ռուսական հենակայանները Հայաստանում՝ այն նենգավոր պատրվակով, թե, իբր, դրանք «չեն ապահովում ռազմական կազմավորումների օպերատիվ ծավալումը, ընդունակ չեն կատարելու առաջավոր տեղակայման զորքերի խնդիրները՝ տվյալ տարածաշրջանում ռազմական գործողությունների դեպքում»: Թվում է, թե ի՞նչ փույթ. պետք է ընդամենը շտկել դրությունը, որպեսզի «տվյալ տարածաշրջանում ռազմական գործողությունների դեպքում» պատրաստ լինեն հակառակորդի ձեռնարկած գրոհը հետ մղելու: Եվ ահա, խնդրի այսպիսի տրամաբանական լուծման փոխարեն, առաջարկվում է «ջրի հետ մեկտեղ տաշտից դուրս թափել նաեւ մանկանը»:

Նկատենք՝ Ռոխլինի այսօրինակ անզուսպ ակտիվությունը տեղի է ունենում հենց այն ժամանակ, երբ Ռուսաստանի ղեկավարությունն ու հասարակայնությունը խորապես անհանգստացած են մինչեւ Ռուսաստանի սահմաններ ՆԱՏՕ-ի ծավալումով: Իրողության տրամաբանությամբ, թվում է, թե ռուսաստանյան գեներալը, այն էլ՝ Դումայի պաշտպանության կոմիտեի նախագահը պարտավոր էր մտածել, թե ինչպես է պետք ամրապնդել սեփական երկրի ռազմավարական դիրքերը գոյություն ունեցող իրականությունում: Եվ սրա փոխարեն նա առաջարկում է դուրս բերել զորքերը իրեն բարեկամ Հայաստանից, որը սահմանակցում է իսկ եւ իսկ «նատոական» Թուրքիային: Վստահ եմ՝ ռուսաստանցի գեներալին քաջ հայտնի է Թուրքիայի տարածքով մեկ սփռված անթիվ ամերիկյան եւ նատոական հենակայանների փաստը: Ճիշտ այնպես, ինչպես նաեւ գիտի, թե կոնկրետ ո՞ր թիրախին են ուղղված հրթռային «սիգարները»:

Իսկ «Ո՞վ եւ ինչպե՞ս քանդեց իմ երկիրը» աշխատության հեղինակին մեզ մնում է առաջարկել շարունակելու աշխատանքը, որն, անկասկած, կարելի է շնորհակալ գործ համարել: Համոզված եմ, իր (նախկինում՝ մեր) երկիրը փլուզման բերած համալիր պատճառների որոնումներն, անպայմանորեն, կպսակվեն հաջողությամբ եւ կօգնեն կանխելու ե՛ւ Ռուսաստանի, ե՛ւ այն երկրների ողբերգությունը, որոնք տակավին դարեր առաջ նրա հետ կապել էին իրենց բախտը: Եվ հարկավոր է դիմակազերծել ոչ այնքան անդրծովյան առաջնորդներին ու ռազմավարներին, որքան՝ սեփական քաղաքական գործիչներին, ովքեր այդպես էլ չկարողանալով իրենց միջից վանել սրկականը, ձեռք են բերել մուտք դեպի բարձր ամբիոններ եւ զանգվածային լրատվական միջոցներ: Բարձրախոսին եւ չորրորդ իշխանությանը «արմունկակովով» հասած սրուկը, առավել քան վտանգավոր երեւույթ է: Վաղուց ի վեր հայտնի է, որ երբեմնի սրուկները խիստ չարաբաղ են: Եվ հենց դրա մեջ է թաքնված մեր մեծ դժբախտությունը, որը հնարավոր կլինի կանխել միայն այն ժամանակ, երբ հասակորեն կտեղաբաշխվեն «գերակայությունները»: Օրինակ՝ եթե սուրբ հայտնի է, որ Ղարաբաղը վերջնականապես կորցնելուց հետո անվերապահորեն կայրվեն Ռուսաստանն իր անցյալին ու գալիքին կապող բոլոր կամուրջները, ապա, հետեւաբար, անհրաժեշտ է մտածել գլխավոր «երկրառազմավարական» խնդրի մասին, որը պետք է լուծել գլխանց: Ասել է թե՝ հարկավոր է գործնականորեն գիտակցել, անհնար է վաղը փրկել Ռուսաստանը, եթե այսօր չփրկվի Ղարաբաղը:

Ես չեմ ասել՝ պատմությունն է փաստել:

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Լեոնիդ Կուչմա. «ԱՊՀ-ում գործում է ուրիշ սկզբունք՝ ուժեղի իրավունքը»

Ինտեգրացիայի հիմքը միության անդամների իրավահավասարությունն է, գտնում է Ուկրաինայի նախագահը

Ուկրաինայի քաղաքական եւ տնտեսական վիճակը դանդաղ. բայց աննահանջ մուտք է գործում հայաստանյան ասպարեզ: Դա, ինքնին, կարեւոր իրադարձություն է, քանզի ԱՊՀ երկրների ղեկավարները վաղուց արդեն այն կարծիքին են, որ Համագործակցությունը կարող է ընթանալ նախ եւ առաջ երկկողմ հունով, իսկ բուն ԱՊՀ քարտուղարությունը սոսկ խորհրդակցական մարմին է: Հայաստանում արդեն գործում է Ուկրաինայի Հանրապետության դեսպանատունը, անցյալ տարի Երեւանում էր նախագահ Լեոնիդ Կուչման, իսկ 1997-ի ամռանը նախատեսվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի այցը Կիեւ: Այս պարագայում հետաքրքրական է Լեոնիդ Կուչմայի «Նեզավիսիմայա գազետա»-ին տված հարցազրույցը, կապված ռուս-ուկրաինական փոխհարաբերությունների հետ: Ստորեւ՝ այդ հարցազրույցը որոշ կրճատումներով:

ՌՈՒԲԵՆ ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

– Ութ կամ տարի առաջ ստանձնելով ՌԴ արտգործնախարարի պաշտոնը, Եվգենի Պրիմակովը հայտարարեց, որ արտաքին դիվանագիտության ասպարեզում նախապատվությունը տրվելու է Ուկրաինայի հետ փոխհարաբերություններին: Ինչպե՞ս կգնահատեք անցած տարին:

– Ինչ խոսք, Եվգենի Պրիմակովի նման հայտարարությունը ինձ լավ գիտեմ, թե ովքեր են կանգնեցրել Բորիս Նիկոլաեւիչին «ովքեր են քաշել նրա բանկոնից»: Այդ ամբողջը նախագահական բիմն է, նախընտրական քաղաքական խաղերը: մարդիկ, որոնց ավելի շատ հուզում է անձնական եւ ոչ ՌԴ-ի աղագան: Եթե նախագահը չգտնվեր շատ լուրջ ճնշման տակ (ես դա շատ լավ գիտեմ եւ հասկանում եմ), ապա մեր երկրների միջեւ չէին լինի հակասություններ, կազմված նաեւ սեւծովյան նավատորմի հետ:

– Պարոն նախագահ, ինչո՞ւ չի լուծվում ռուս-ուկրաինական պետական սահմանի դեմարկացիայի եւ դելիմիտացիայի խնդիրը:

– Այս հարցը Ուկրաինայի համար ճնշում գործադրելու լծակներից մեկն է:

Հուսով եմ, որ շուտով ՌԴ քաղաքական վերնախավը վերջիվերջո կգիտակցի, որ հասակ ուրվագծված սահմանների բացակայությունը մաքր ճանապարհատրանսպորտային միջադեպ չէ: Սահմանագծի անցկացումն ու որոշումը կարեւոր քաղաքական խնդիրներ են եւ ցանկացած անկախ երկրի գոյության նախադայմանը: Այդ խնդիրը պետք է լուծել որքան հնարավոր է արագ, դա բխում է նաեւ ՌԴ շահերից:

– ՌԴ գործարար շրջանակներում բավականաչափ մեծ է Ուկրաինայի եւ Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ամրագրման կողմնակիցների թիվը:

– Այո, ես գործում եմ այդ ուղղությամբ: հաճախ հանդիպումներ եմ ունենում ռուս արդյունաբերողների եւ գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ: Նրանք, ի դեպ, ավելի դարզ են տեսնում մեր երկու երկրների փոխհարաբերությունների զարգացման հեռանկարները: Մինչ քաղաքագետները վիճում են, գործի մարդիկ ձեռք են բերում համապատասխան դայմանավորվածություններ: Այնուամենայնիվ, ռուս-ուկրաինական շատ նախագծեր չեն ստանում իրենց գործնական արտահայտությունը:

– Եթե Ուկրաինայի եւ ՆԱՏՕ-ի փոխհարաբերությունները զարգանան ավելի արագ, քան ՌԴ-ի եւ ՆԱՏՕ-ի, ապա դա որքանո՞վ կնպաստի մեր երկու երկրների փոխհարաբերությունների վաստարացմանը:

– Մենք ելնում ենք այն բանից, որ Ուկրաինան չեզոք, արտաքին դեսդիրքում է: Մեր կարծիքով, Ուկրաինա-Ռուսաստան գծի հնարավոր «շեղումների» դատճառը ՆԱՏՕ-ն չէ: ՆԱՏՕ-ն սոսկ առիթ է: Եթե Ուկրաինան եւ Ռուսաստանը ցանկանում են դահդանել բարիդրացիական հարաբերություններ, իսկ մեր կողմից, ի դեպ, նման ցանկությունը միշտ էլ ցուցադրվում է, ապա որեւէ ուժ անզոր է մեզ գժտեցնելու:

– ԱՊՀ երկրների մի շարք նախագահների վերջին հայտարարությունների համաձայն, շատերն այն կարծիքին են, որ համագործակցության քաղաքականության առանցքային ուղղությունները լինելու են հենց երկկողմ հարաբերությունները, իսկ ԱՊՀ-ն մնալու է որպես զուտ խորհրդատվական մարմին:

– Մենք մեղավոր չենք, որ ԱՊՀ կառույցներում առկա են կենտրոնախույս միտումներ: Այդ հարցը դետք է տալ ուրիշներին: Ես Համագործակցության լուծարման կողմնակից չեմ: ԱՊՀ-ն, որը կոչված էր Եվրամիության տարբերակով դառնալու քաղաքակիրթ ինտեգրացիոն կառույց, չկայացավ: Թերեւս, «ԱՊՀ ինգամյակի» առավել դիպուկ գնահատականը Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւինն է, որը ձեր թերթին տված հարցազրույցի մեջ նշեց, որ «Ռուսաստանն ԱՊՀ-ում ծավալել է այնդիսի քաղաքականություն, որը ոչ թե ձգում է, այլ վանում է դոտենցիալ դաշնակիցներին»:

Այս առումով ուսանելի է Եվրամիության փորձը: Այդ ինտեգրացիոն տարածքի հիմքը միության բոլոր անդամների իրավահավասարությունն է, եւ դա անկախ երկրի հզոր կամ մեծ լինելուց, լինի Գերմանիան, թե Լյուքսեմբուրգը: Ցավոք, ԱՊՀ-ում գործում է ուրիշ սկզբունք՝ ուժեղի իրավունքը:

– Ձեր կարծիքը Սեւաստոդոլ քաղաքի կարգավիճակի եւ սեւծովյան նավատորմի բաժանման մասին:

– Ուկրաինայի դիրքորոշումը քաջ հայտնի է: Բավական է հիշել, որ Սահմանադրության դրույթներից մեկն ասում է. «Ուկրաինայի տարածքում անթույլատրելի է արեւմտյան ռազմական հենակետերի տեղակայումը»: Մինչդեռ փոխզիջման դատրաստակամությունը մեզ թերեց որոշ անցումային դրույթների մշակման, կապված արտերկրների ռազմական խմբավորումների Ուկրաինայում ժամանակավոր տեղակայվելու հետ: Մեր այս նախաձեռնությունը ստեղծեց այն իրավական դաշտը, որի վրա եւ կարելի էր լուծել այդ խնդիրը:

ՎԻԿՏՈՐ ՏԻՄՈՇԵՆԿՈ
«Նեզավիսիմայա գազետա»
20.02.97

TRT

Թուրքիան գոհ է Եվրամիությունից

Իսկ Հունաստանը՝ դժգոհ

Ինչպես հաղորդում է թուրքական հեռուստատեսությունը, Կիպրոսի առնչությամբ Եվրամիության շրջանակներում տեղի ունեցած վերջին փոփոխությունները Թուրքիան գնահատեց այդ կազմակերպության կողմից կոգում թուրքական հատվածի գոյությունը որպես փաստ ընդունելու դրական քայլ: Թուրքիայի արտգործնախարարության բանբեր, ավագ դեսպան Օմեր Ամբելը հերքական մամլո ասուլիսում ուշադրություն դարձրեց այն հանգամանքին, որ Կիպրոսի Հանրապետությունը Կիպրոսի թուրքերին չի ներկայացնում: Անդրադառնալով Եվրամիությանը անդամագրվելու առումով Կիպրոսում տեղի ունենալիք փոփոխությունների հնարավորության հարցին, Ամբելը նշեց, որ Թուրքիան որեւէ զիջման չի գնա:

Մյուս կողմից, Հունաստանի արտգործնախարար Թեոդորոս Պանգալոսը Աբենում կազմակերպված մամուլի ասուլիսում հայտարարեց. «Եվրամիության կողմից այդ կազմակերպությանն անդամագրվելու վերաբերյալ Կիպրոսի հունական հատվածի դիմումը քննարկման չդնելու փաստը նշանակում է պատշաճորեն ճանաչել Հյուսիսային Կիպրոսի թուրքական հատվածն ու թաղել Կիպրոսի խնդիրը: Անգլիան ու Գերմանիան մերժելով դիմումը՝ Թուրքիային ուրախացնելու արտավոր ուղի են ընտրել: Եվրամիության անդամ որոշ երկրներ Թուրքիայի նկատմամբ վարում են կոյր եւ հիմար քաղաքականություն: Չոքեմ է մոռանալ, որ կոգում միաժամանակ երկկողմ բանակցություններ վարելու հնարավորությունը բացառվում է: Խոշոր պետություններն իրենց արտադրանքը վաճառելու նպատակով դիմում են արտավոր քայլերի: Իսկ Թուրքիայի հետ երկխոսության գնալու հնարավորության վերաբերյալ այդ պետությունների պնդումները, մեղմ ասած, անտեղյակ ձեւանալ է վարձել են»:

Օդանավերի համատեղ արտադրության ծրագիր

Երեւանը Անկարայում ընդունեց Թուրքիային օդանավերի համատեղ արտադրության առաջարկներ ներկայացրած «Մակդոնալդ-Դուգլաս» ավիաընկերության գործադիր տնօրեն Ջոն Մակդոնալդին: Երեւանն ասաց, «Հայտնի 3 խոշոր ֆիրմաներ մեզ օդանավերի համատեղ արտադրության առաջարկ են ներկայացրել: Նման դայմաններում մնում է ընդունել ամենաբահավետ տարբերակը»: Ջոն Մակդոնալդը դատասխան խոսքում ընդգծեց, որ Թուրքիան համագործակցության առումով ռազմավարական մեծ հնարավորություններ ունեցող երկիր է:

Միջազգային մրցանակ «Հյուրրիյեթ» օրաթերթին

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, նախագահ Ս. Դեմիրելը Ստամբուլում մասնակցեց «Հյուրրիյեթ» օրաթերթին «JSRO-9001» միջազգային մրցանակ շնորհելու արարողությանը: Դեմիրելը շնորհավորելով թերթի աշխատակիցներին ասաց, «Այս մրցանակը շնորհվել է ոչ միայն «Հյուրրիյեթ» թերթին, այլ նաեւ թուրք ժողովրդին ու թուրքական դետությանը»: Այնուհետեւ Անգլիայի Ստանդարտների ինստիտուտի տնօրենը թերթի խմբագիր Երթուղրուլ Օգյոլին հանձնեց «JSRO-9001» որակի միջազգային վկայականը, որի կրկնօրինակը հանձնվեց Ս. Դեմիրելին: Ի դատասխան Դեմիրելն ասաց, «Վերջապես Չանքայա նստավայրում ցուցադրելու արժանի մի նվեր ստացա»:

Գ. Ջ.

ՏԱՋԻԿՍՏԱՆ

Սաղիրով եղբայրները «չմարսեցին» դատանդներ վերցնելը

26 ՓԵՏՐՎԱՐ, DW: Տաջիկստանի կառավարական բանակը սկսեց Սաղիրով եղբայրների ջոկատի ձերբակալման եւ ոչնչացման գործողությունը: Այդ ջոկատի զրոհայինները վերջերս 15 արտասահմանցի էին դատանդ վերցրել: այդ թվում ՄԱԿ-ի դիտորդների, ռուսաստանյան լրագրողների եւ Տաջիկստանի անվտանգության նախարարին, եւ դատանդներին ազատ արձակեցին այն բանից հետո միայն, երբ Դուշանբեի իշխանությունները Աֆղանստանից Տաջիկստան տեղափոխեցին իրենց ավելի քան 40 կողմնակիցներին: Տաջիկստանի նախագահի մամլո քարտուղար Սաֆիդովի խոսքերով, Դուշանբեից արեւելք ընկած Ջավանի գյուղում գտնվող Սաղիրով եղբայրների զինված խմբի մի մասը արդեն ձերբակալվել է, եւ նրա մի քանի անդամները սպանվել են: Սաֆիդովը նաեւ հայտնեց, որ հարեւան բոլոր շրջանները կառավարական զորքերի վերահսկողության տակ են վերցվել: Իսկ Դուշանբեի զինվորական աղբյուրները հայտնում են, որ Սաղիրովների ջոկատի մի մասը մի քանի օր առաջ տեղակայվել էր լեռնանցքներից մեկում եւ մարտի էր բռնվել տաջիկական միավորված ընդդիմության մարտիկների հետ: Մարտերի ընթացքում երկու կողմերն էլ զգալի կորուստներն են ունեցել: Սաղիրովների ջոկատը 20-ից ավելի մարդ է կորցրել:

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Երեւանում Մայր տաճարի կառուցման գաղափարը ոտակոնում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին՝ կառված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակի հետ: Այդ մասին Ս. Էջմիածնի հոգեւոր խորհրդի կողմից որոշումն ընդունվել է 1989 թ. հուլիսի 14-ին:

Խուռներամ բազմության ներկայությամբ կատարվել է հիմնարկեքի հանդիսավոր արարողություն եւ երջանկահիշատակ Վազգեն Ա-ի օրհնությամբ տաճարի կառուցման տեղում կանգնեցվել է հուշաքար:

Կառուցվելիք Մայր տաճարի լավագույն տարբերակի ընտրություն կայացնելու նպատակահարմար ձեւը համարվեց միջազգային մրցույթի հայտարարումը ու այդ կարգակցությամբ կազմվեց մրցութային հանձնաժողով (ժյուրի): Ինձնից բացի, նրա կազմում էին Մայր աթոռի դիվանատետ, արքեպիսկոպոս Ներսես Պոզարյանը, Արարատյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Գարեգին Ներսիսյանը, Ռ. Ֆ. գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, Պետական մրցանակի դափնեկիր, պրոֆ. Տիմ Թորոսյանը, նույն ակադեմիայի, նաեւ ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, ՀՀ նախարարների խորհրդի ճարտարապետության վարչության պետ, վաստակաւոր ճարտարապետ Ռ. Տոլիսկյանը, Երեւան քաղաքի գլխավոր ճարտարապետի տեղակալ, վաստակավոր ճարտարապետ, Պետական մրցանակի դափնեկիր Ս. Մինասյանը, վաստակավոր ճարտարապետ Բ. Արզումանյանը: Արտասահմանից մրցութային հանձնաժողովի կազմում ներգրավվել են Արմեն Հախնազարյանը (ԳՖՀ) եւ Պաոլո Կունեոն (Իտալիա), երկուսն էլ հայ ճարտարապետության պատմաբաններ: Այդպիսի կոմպլեքսային կազմի նպատակն էր ապահովել հանձնաժողովի ներկայացուցիչներ արդիական եկեղեցական ճարտարապետության ավանդույթների ու գրական նախագծման փորձառու մասնագետներով:

Ձանգվածային լրատվության միջոցով մրցույթ հայտարարելու մասին հաղորդում կատարվել է սկսած 1989 թ. հուլիսի 18-ից: Մասնակցել ցանկացողներին առաջադրանքներ վերցնելու վերջին ժամկետ է սահմանվել՝ տեղացիների համար մինչեւ 1990 թ. հունիսի 15-ը, իսկ արտասահմանցիների՝ հուլիսի 15-ը: Մասնակիցներին առաջադրանքի հետ տրամադրվել են տաճարի կառուցման վայրի տեղահանույթային գծագրերը, նաեւ պայման, որ նախագծերը ներկայացվում են առանց հեղինակի ազգանունը նշելու, հնգաթիվ նշանաբանով: Նախագծերը ներկայացնելու ժամկետ է սահմանվել 1991 թ. սեպտեմբերի 1-ը:

Մրցութային հանձնաժողովի առաջին նիստը մասնակցությամբ Վեհափառ հայրապետ Վազգեն Ա-ի, տեղի է ունեցել Ս. Էջմիածնի Մայր աթոռում 1992 թ. փետրվարի 6-ին: Հանձնաժողովի նախագահ է ընտրվել տողերիս հեղինակը, իսկ քարտուղար՝ Բ. Արզումանյանը: Նկատի ունենալով ռուբլու արժեզրկի անկումը, վերանայվել է տրվելիք մրցանակների չափը՝ 50 հազարական ռուբլի հավանության արժանացած 3 նախագծերի համար: Բացի այդ, լրացուցիչ սահմանվել է 3 խրախուսական մրցանակ՝ 10 հազարական ռուբլու չափով:

Սահմանված ժամկետում մրցույթին ներկայացված 33 նախագծերը, այդ թվում՝ 7-ը արտասահմանից, որոշեց ի տես երեւանցիների ներկայացնել Նկարչի տան ընդարձակ ցուցասրահում, որպեսզի հետաքրքրվողները ծանոթանան, ցանկացողներն որենց կարծիքը արձանագրեն մատյանում: Ցուցադրությունը տեւեց 20 օր՝ 1992 թ. փետրվարի 6-25-ը:

Այդ օրերին հանձնաժողովն անց է կացրել երկու նիստ: Ընդհանուր նախընտրություն է տվել այն նախագծերին, որոնք տեխնոլոգիապես ճիշտ են լուծված ու համապատասխանում են ճարտարապետական լուծման մեջ ազգային ավանդույթների արդիական մեկնաբանման պահանջին:

Ղեկավարվելով այդ սկզբունքով, փետրվարի 17-ին ցուցադրված նախագծերի մանրակրկիտ քննարկումից հետո, 22 նախագիծ հանվեց հետագա քննարկումից:

Փետրվարի 20-ի նիստում քննարկումից հանվեցին եւս 4 նախագծեր ու հետագա քննարկման համար պահպանվեցին 85258, 77777, 70301, 12358, 00301, 20001 եւ 88816 նշանաբաններով ներկայացված նախագծերը:

Նշված նախագծերը փոխադրվեցին Ս. Էջմիածնի մայրավանքի նոր վեհարան, որպեսզի Վեհափառ հայրապետն ու վանքի միաբանները ծանոթանան:

Մրցութային հանձնաժողովի փետրվարի 25-ի նիստում վերստին հանգամանորեն քննարկելով, կայացվեց այն եզրակացությունը, որ դրանցից ոչ մեկը չի կարող երաշխավորվել անմիջապես կիրառելու համար: Ուստի առավել հաջողվածներին կարելի է խրախուսել մրցանակներով՝ առանց կառուցման համար երաշխավորելու:

Բարձր մրցանակի արժանի ճանաչվեցին 77777 (միածայն), 70001 (8 ձայնով) նշանաբաններով ներկայացված, իսկ խրախուսական՝ 7030 (միածայն), 12358 եւ 19432 (6 ձայնով) նախագծերը: Ընդունված որոշումից հետո բացվեցին ծրարները եւ հայտնի դարձան մրցույթին ներկայացված նախագծերի հեղինակները: Այդ մասին Ս. Էջմիածնի Մայր աթոռի դիվանատունը տեղեկատվական մամուլի միջոցով տվեց հետեւյալ հաղորդումը.

«Մայր աթոռ Ս. Էջմիածնի Դիվանատունը հայտնում է, այսու, որ ավարտվեցին Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի կարգակցությամբ Երեւանում կառուցվելիք Մայր տաճարի նախագծերի (հայտարարված մրցույթի ընող հանձնաժողովի) աշխատանքները:

Նախագծերի քննարկումից պարզվեց, որ ներկայացված 33 նախագծերից ոչ մեկը լրիվ չի բավարարում մրցույթի պայմաններին, ուստի հնարավոր չեղավ առանձնացնել 3 նախագիծ ներկայացնելու համար կարգակցությունը: Ուստի հանձնաժողովը որոշեց առավելություն ունեցող երկու նախագծերի հեղինակներին շնորհել մրցանակ՝ յուրաքանչյուրին հինգ հազար ռուբլու պարգեւ, իսկ 3 նախագծերի հեղինակներին շնորհել խրախուսական մրցանակներ, յուրաքանչյուրին տրամադրելով տասը հազարական ռուբլի:

Մրցանակի արժանացած նախագծերն են.

– 77777 խորհրդանշանով նախագիծը, հեղինակ՝ վաստակավոր ճարտարապետ Ստեփան Հայկի Քյուրչյան:

– 70001 խորհրդանշանով ներկայացված նախագիծը: Հեղինակ՝ ճարտարապետ Արտակ Բենիկի Դուլյան, մասնակցությամբ ճարտարապետ Հայկ Երեմի Ասատրյանի:

Խրախուսական մրցանակի արժանացել են.

– 70301 խորհրդանշանով նախագիծը, հեղինակներ՝ ճարտարապետներ Անահիտ Արթուրի Թարխանյան, Արթուր Տիգրանի Բաղդասարյան եւ Լեւոն Դավթի Հակոբյան:

– 12358 խորհրդանշանով նախագիծը, հեղինակներ՝ ճարտարապետության դոկտոր Օլեգ Մանիկոնի Վարդանյան եւ ճարտարապետ Նվեր Իսմայիլի Ասատրյան:

– 19432 խորհրդանշանով նախագիծը, հեղինակ՝ Ռազմիկ Սերոբի Ասատրյան:

Հանձնաժողովը որոշեց մրցանակի արժանացած երկու նախագծերի հեղինակներին տալ ժամանակ, համապատասխան դիտողություններով, նախագծերի մեջ բարեփոխություններ կատարելու համար, որից հետո կկատարվի նախագծի վերջնական ընտրությունը (տես «Էջմիածին», 1992, Ը, էջ 52):

Նախագծերը բարեփոխելու համար հեղինակներին հայտնվեց մրցութային հանձնաժողովի մասնագիտական դիտողությունները (տես «Էջմիածին» ամսագրի նույն համարի 53-ր էջը): Դրանց հիման վրա բարեփոխված նախագծերի ներկայացման ժամկետ սահմանվեց 1992 թ. սեպտեմբերի վերջը:

Մրցութային հանձնաժողովի եզրափակիչ նիստ տեղի ունեցավ 1992 թ. օգոստոսի 29-ին, Մայր աթոռ Ս. Էջմիածնում, մասնակցությամբ նրա 7 անդամների:

Քննության են առնվել Ստեփան Քյուրչյանի, Արտակ Դուլյանի եւ Հայկ Ասատրյանի կողմից լրացուցիչ ներկայացված նախագծերը:

Նշված արձանագրության վերջում կարդում ենք.

«Հանձնաժողովը հանգամանորեն ծանոթանալով ներկայացված նախագծերին՝ եկավ հետեւյալ եզրակացության. Լիովին հավանություն տալ ճարտարապետ Ստ. Քյուրչյանի վերամշակած նախագծին, որը եւ ներկայացնել Վեհափառ հայրապետի ուշադրությանը»:

Այդպես էլ արվեց. նախագծին ծանոթանալով, Վազգեն Ա-ը նրա վրա կատարեց իր հավանության մակագրությունն ու ստորագրեց (պահվում է Մայր աթոռի դիվանատանը)»:

Հարկ համարեցինք այս մանրամասնությունը հայտնել ի լուր նրանց, որոնց կարծիքով նախագիծն անցել է «ծածկադրբոցի» կարգով: Բավ լիցի, հայտարարված մրցույթի բոլոր փուլերում խստությամբ պահպանվել են մրցույթի կանոնները: Ուստի գրողների միությունում տեղի ունեցած քննարկումը ոչ իրավատու է (առանց ճարտարապետների միության ներկայացուցիչներին հրավիրելու), ոչ էլ հասկանալի է: Այլապես բանաստեղծուհի Մեսրոպեն չէր հարցադրի, թե՝ «Քաղաքապետը, գլխավոր ճարտարապետը, ՀՀ նախագահը գիտե՞ն, թե ինչ է կառուցվում», նույն հարցը չէր կրկնի Հրայր Մաթեւոսյանը, որպեսզի լսեն Համլետ Խաչատրյանի (որը մրցույթի չի մասնակցել, որովհետեւ այն ժամանակ նա քաղաքում չէր) պատասխանը:

Մի՞թե կարելի է գնացքից ուշացած ուղեւորի ելույթով (որը հակասում է ստեղծագործական բնագավառի գործի բարոյական նորմերին), հասարակության անտեղյակ մարդկանց տպավորմանորոշել:

Ստ. Քյուրչյանի նախագիծը մի քանի շաբաթ շարունակ ցուցադրվել է նաեւ ճարտարապետի տանը, երբ 1995 թ. վերջում այնտեղ կազմակերպված էր ԱՊՀ ճարտարապետների ստեղծագործությունների սրբազգայրս ստուգատես: Հավակնորդներին հնարավորություն էր տրված իրենց նախագիծը եւս ցուցադրել: Բարձրագույն («գրան պրի») մրցանակի արժանացավ միակ՝ Ստ. Քյուրչյանի նախագիծը:

Ցավոք, ազգանվեր այս գործընթացին այլ արգելքներ հարուցողներ եւս եղան: Մեկն առաջարկում էր Ձվարթնոցը կրկնել, մեկ ուրիշը՝ Ծիծեռնակաբերդում մի այլ տարբերակ օգտագործել, հիմա էլ շարունակում են հավակնորդները: Ոմանք էլ հարցնում են, իսկ ո՞ւմ է երեւանում նոր եկեղեցի կառուցել: Իմ եւ շատերի համոզմամբ՝ այդ, հանգի անցել են կրոնահալած տարիները, երբ Երեւանի մի քանի եկեղեցիներ ավերման ենթարկվեցին: Մեր ժամանակներում հավատը վերադառնում է մարդկանց սրտերը, իսկ գործող 3–4 եկեղեցիները տարողունակ չեն: Չմոռանանք, որ Սեւանում գործում են շուրջ 30 հայկական եկեղեցիներ:

Ամենայն հայոց կաթողիկոս, լուսահոգի Վազգեն Ա-ը տաճարի հիմնարկեքի առթիվ արտասանած իր խոսքի վերջում հեռատեսորեն նշեց. «Իմ հայացքը ուղղելով դեպի մոտ ապագան, իմ ներքին աչքերով տեսնում եմ այն հոյակապ տաճարը, որը պիտի բարձրանա այստեղ, եւ սուրբ խաչը պիտի պլանա դեպի երկինք: Հավանաբար ես այստեղ չեմ լինելու, բայց գուցե հիշեք ինձ այդ օրը»:

Եկեք հարգենք նրա սուրբ հիշատակը, երբ այսօր նորընտիր կաթողիկոս Գարեգին Ա-ի՝ նախագծի վերաբերյալ մասնակի դիտողությունները նկատի առնելով, նախագիծը կատարյալ է եւ վերջապես շինարարությունը սկսված է: Քաջալերենք նրա գործադրելիք դժվարին ջանքերը, հաջողություն մաղթենք, որպեսզի տարիներ հետո Ս. Լուսավորիչ հոյաբեղ Մայր տաճարն իր ծավալածեւերով զարդարի մեր մայրաքաղաքի համայնապատկերը:

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ս. Էջմիածնի Մայր աթոռի
ճարտարապետական
հանձնախմբի նախագահ,
ՀՀ ԳԱ ակադեմիկոս

Խմբ. – Մեր աշխատակցուհու այդ բղբակցությունը հարազատ ներկայացումն էր մեկ օր առաջ Գրողների տանը տեղի ունեցած միջոցառման:

Վասն ճշմարտության

*Հարգելի խմբագիր «Ազգ» թերթի. Անդրադարձի կարգով վրդովմունքս հայտնելով թերթիդ ս. թ. փետրվարի 15-ի համարում «Մի «այլանդա՞կ» էլ կավելանա» (Մայր տաճարի ո՞ր տարբերակը կպարտադրվի երեւանցիներին) խորագրով Անահիտ Հովսեփյանի հաղորդման առթիվ. որպես գործին տեղյակ, պարտս եմ համարում ելույթ ունենալ. որպեսզի փարատվի թերթիդ ընթերցողների տարակուսանքը:**

Փետրվարի 26-ից Երեւանում է ՌԴ պետկինոյի նախագահ Արմեն Մեղվեդեւը: Նա, ըստ էության, իսկական կինոյի իսկական զինվոր է, համոզված, «որ Ռուսաստանում ոչ թե կինոյի, այլ տնտեսության ճգնաժամ է», իրատես, ուստի նաեւ տարակուսած, թե ինչո՞ւ «ռուսական կինեմատոգրաֆում հայկական հզոր «լոբբիի» գոյության պայմաններում, մինչ օրս գործնականում չկա համատեղ եւ ոչ մի նախագիծ կամ ֆիլմ»: Ասել, թե պարոն Մեղվեդեւը եկել է հենց միանգամից լրացնելու այդ «բացը» լուրջ չէ, թեեւ այցի նպատակը ուղղակիորեն առնչվում է մարտին նախատեսված երկկողմ փաստաթղթի ստորագրմանը: Այսօր նա հանդիպում ունի ՀՀ նախագահի հետ եւ մամուլի ասուլիս՝ մշակույթի նախարարությունում:

Երեկ՝ փետրվարի 27-ին, Երեւանի կինոյի տանը Արմեն Մեղվեդեւն իր գործընկերների եւ բարեկամների շրջապատում ներկայացրեց ռուսական կինեմատոգրաֆի ներկայիս վիճակը: հանդիպմանը մասնակից էին նաեւ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Սմբատյանը եւ Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Ուսնովը: Ցավալի էր տեսնել մեր գործունակ, սակայն անգործության մատնված ռեժիսորներին եւ սցենարիստներին, որոնց համար, ըստ էության, անցյալի դափնիները (ժամանակագրական առումով) լավ բալասան չեն:

Ինչեւէ՝ անցյալը եւ նախկին Միությունը նույնպես, եւ նոր պայմաններում արդեն անկախ կինոստուդիաները պարտադրված են հարթել համագործակցության նոր արահետներ:

Խոսելով այսօրվա ռուսական կինոյի մասին՝ Արմեն Մեղվեդեւը ցավով նկատեց, որ անցած տարին «ամենից դժվար փորձությունն էր» եւ, եթե «Ռուսաստանում կապիտալիզմի վայրի զարգացման ժամանակահատվածում 1991–92 թթ. ընթացքում էկրան էր դուրս գալիս մինչեւ 400 ֆիլմ, ապա 1996-ին՝ ընդամենը 20–25»: Այնուամենայնիվ, նա հույս հայտնեց, «որ գլխավոր դժվարությունները կարծես եւ տեւում են», ինչը կարող է հիմք հանդիսանալ երկկողմ համագործակցության համար:

Ա. Ղ.

Ռաֆֆի եւ Անի Պետրոսյանների համերգը՝ Սեւանքում

Ֆրանսահայ հայտնի դաշնակահարներ Ռաֆֆի եւ Անի Պետրոսյանները Սեւանքի Աթաթուրքի անվան մշակութային կենտրոնում հունվարի 31-ին ելույթ են ունեցել բուրգական պետական նվագախմբի հետ. հաղորդում է «Արմինյան Միրոր Սպիտքեյթր» շաբաթաթերթն իր փետրվարի 15-ի համարում: Նրանք կատարել են Մոցարտի կոնցերտը երկու դաշնամուրի համար, որից հետո հանդիսատեսների բուռն ծափահարությունների ներքո նվագել են նաեւ «Ծաղիկների պարը» Չայկովսկու հայտնի «Շչելկունչիկ» բալետից: Երկրորդ անգամ այդ նույն դահլիճում Պետրոսյանները ելույթ են ունեցել փետրվարի 4-ին:

«Մեր քարեղեն ոգին» գիրքը՝ արցախյան ազատամարտին

«Անպարտելի է մնում նա, ով մահն է իրեն ընտրում առաջնորդ: Այսպես վարվել, ասել է մահը դարձնել ներքին զորություն, ներուժ, կյանքի եւ հաղթանակի սկզբունք: Այսպես է վարվում նահատակը, հերոսը»: Գարեգին Նժդեհի այս ասույթը տեղ է գտել Տուրա Պետրոսյանի «Մեր քարեղեն ոգին» գրքում, որը նվիրված է արցախյան ազատամարտում զոհված Արտուրաս քաղաքի ու շրջանի գյուղերի բնակիչների հիշատակին: Գիրքը լույս է ընծայել «Ազատ Հայք» հրատարակչությունը «Հարատեւության գարկերակ» մատենաշարում: Նկարիչն է արտաշացի Խորեն Հակոբյանը: Հուշամատյանում օգտագործված են Վան եւ Վահե Սաֆարյանների, ինչպես նաեւ միջնադարյան Հայաստանի քանդակների ու խաչքարերի լուսանկարները:

Ինքնատիպ, սղասված եւ ամենայն իրավունքների արժանի այս հարուստ ժողովածուն, որի նյութերը քաղված են «Արտաշատ», «Նավասարդ», «Նոյ» եւ ուրիշ պարբերականներից, հեղինակի տեսական ու նվիրական աշխատանքի արդյունքն են: Համոզված եմ, որ նա առաջիկայում ընթերցողին կհանձնի նաեւ Արարատի եւ Մասիսի երջանների ազատամարտիկներին նվիրված հուշամատյանները:

Գրքում տրված է ազատամարտիկների անվանացանկը, կենսագրությունները, հերոսական արարքները, նրանց հիշատակին ձոնված բանաստեղծությունները ու երգերը: Հեղինակը հնարավորից օգտագործել է Ավ. Իսահակյանի արձակ խոսքը, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Պ. Սեւակի, Ռ. Դավոյանի, զուսան Ռազմիկի եւ այլոց բանաստեղծությունները, Արցախի եւ Արտաշատի մասին կարեւոր տվյալներ եւ ուրիշ նյութեր:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՃՇՏՈՒՄ: «Ազգի» փետրվարի 19-ի համարում տպագրված «Էդգար Շահինի նամակները հայտնություն էին ողջ համար» նյութում անճշտություն է թույլ տրվել: Է. Շահինի նամակները ոչ թե Հայաստանում են բարգմանվել, այլ Ֆրանսիայում, հայտնի մտավորական Լեւոն Քեչեյանի կողմից: Իսկ նամակները հրատարակելու ճակատագիրը դեռեւս անհայտ է:

ԵՐԵՎԱՆ

Արմեն Մեղվեդեւը Կինոյի տանը

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ-2006

Աշխարհի առաջնությունը հյուրընկալելու պատրաստ երկրների պայքարը սրվում է

Ինչպես տեղեկացնում է «Ֆայնենշլ թայմս» օրաթերթը, Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիայի ղեկավարները 2006 թ. աշխարհի առաջնությունը իրենց երկրում անցկացնելուն աջակցելու խնդրագրով դիմել էին Մեծ Բրիտանիայի կառավարությանը: Այս ամսվա սկզբներին, ստանալով դրական պատասխան իրենց անբավարար հիմնավորված հայցի համար, անգլիական ֆուտբոլի ղեկավար այրերը պատրաստվում են լայնածավալ եւ «արյունալի» պայքար մղել Գերմանիայի ֆուտբոլային ղեկավարության հետ: Մինչ այդ Գերմանիան աշխարհի առաջնության անցկացման հայտ էր ներկայացրել:

Անգլիական ֆուտբոլային ասոցիացիայի (ԱՖԱ) պատասխանատու Դեյվիդ Դեյվիսը ասել է, որ ասոցիացիան մինչեւ 10 մլն ֆունտ ստերլինգ (16.2 մլն դոլար) է մտադիր ներդնել Եվրոպական ֆուտբոլային միության պատասխանատուների լոբբիզմի համար, աղացուցելու, որ Անգլիայի փասարկները ավելի ծանրակշիռ են, եւ երկիրը ավելի լավ հող որեւէ մեկը պատրաստ է ֆուտբոլային կյանքի կարեւորագույն մրցաշարի կազմակերպմանն ու հավուր պատշաճի անցկացմանը: Ավելի վաղ եվրոպական ֆուտբոլային միության ղեկավարները հայտարարել էին Գերմանիայի հայտին աջակցելու իրենց որոշման մասին: «Աշխարհի առաջնությունն Անգլիայում անցկացնելուն ուղղված կամպանիան ընդգրկելու է ողջ աշխարհը, որովհետեւ մենք վստահ ենք, որ մեր տարբերակը ամենալավն է», հայտարարել է Դեյվիսը:

Անգլիայի ֆուտբոլային ասոցիացիայի նման նպատակասլացությունը սպառնում է սրել ՈՒԵՖԱ-ի եւ ՖԻՖԱ-ի հարաբերությունները, որոնք վատացել էին



Սեուլում նման ձեւով են նախապատրաստվում ֆուտբոլի աշխարհի առաջնությանը. ի՞նչ անակնկալ կմատուցեն հաջորդ առաջնության կազմակերպիչները

Գերմանիայի հայտը պաշտպանելու ՈՒԵՖԱ-ի որոշումից հետո: ԱՖԱ-ի պատասխանատուները պնդել են, որ վերջերս ՈՒԵՖԱ-ի ուղարկած ֆաքսը Գերմանիայի հայտը պաշտպանելու վերաբերյալ չուներ իր նախադեղը, որին ի պատասխան ԱՖԱ-ն ՈՒԵՖԱ-ին մեղադրել է «ոչ դեմոկրատական» լինելու համար: Իրադարձությունների այս ոլիսի ընթացքը եւ ՈՒԵՖԱ-ի նկատմամբ ինքնաքննությունները չեն ընդունվում Գերմանիայի ֆուտբոլի պաշտոնատարների եւ ՈՒԵՖԱ-ի փոխ նախագահ Լենարտ Յոհանսոնի կողմից: Վերջինս պնդում է, որ Մեծ Բրիտանիայի ֆուտբոլային մեծամեծների անգործությունն է Գերմանիայի հետ մրցակցությունում եւ մնալու դատաստան: Իր հերթին, Գերմանիայի ֆուտբոլային ֆեդերացիան ողջունել է 2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությունը Գերմանիայում անցկացնելու ՈՒԵՖԱ-ի աջակցությունը, այն անվանելով խիստ կարեւոր քայլ, որը «նոր օգնություն է» երկրի ծրագրերին:

Պատրաստեց
ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Դահուկորդները շարունակում են պայքարը

Սպորտվարչության լրատվական ծառայության հաղորդման համաձայն, Ճաղկաձորում շարունակվող դահուկավազքի Հայաստանի առաջնությունում մարզիկները հերթական մեկնարկների դուրս եկան: Տղամարդկանց 15 կմ դասական ոճով մրցավազքում առաջինը վերջնագիծը հասել գյումրեցի Արամ Հաջյանը: Նույն մրցաձեւի 7.5 կմ կանանց մրցավազքում իրեն հավասար չունեցավ Հաջյանի համաքաղաքացի Ալլա Միքայելյանը: Տղամարդկանց 4x10 կմ փոխանցումավազքում մրցակցությունից դուրս էր Գյումրիի ձմեռային մարզաձեւերի հանրապետական մարզադպրոցի թիմը: Երկրորդ եւ երրորդ տեղերը համապատասխանաբար գրավեցին Կոտայքի մարզի եւ Երեւանի առաջին թիմերը: Լավագույն եռյակը նույն տեսքը ստացավ նաեւ կանանց 4x5 կմ փոխանցումավազքից հետո:

Ընկերական մրցամարտ Իրանի եւ Հայաստանի ըմբիշների միջեւ

Սպորտվարչության լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ Իրանում ազատ ոճի ըմբշամարտի ընկերական պատանեկան մրցամարտ անցկացվեց նվիրված իսլամական հեղափոխության 18-րդ տարեդարձին: Մրցաքրքիր էին դուրս եկել Իրանի չորս թիմեր եւ Հայաստանի 12 ըմբիշներ: Մեր հանդիպումը ներկայացնում էին Արտաշատի օլիմպիական հերթափոխի մարզադպրոցի սաները: Հայաստանի մարզիկները տարան 3 հաղթանակ եւ, դարձվելով Իրանի առաջին թիմին, գրավեցին 2-րդ տեղը: Հայ ըմբիշներից առավել հաջող գոտեմարտեց Արթուր Ղազարյանը (58 կգ), որը գերազանցեց արեց բոլոր մրցակիցներին:

Հաջող նորամուտ Իրանում

Սպորտվարչության լրատվական ծառայությունից հայտնում են, որ Իրանում ավարտվեցին երկրի իսլամական հեղափոխության տարեդարձի ծրագրում լողի մրցումները: Կանանց պայքարին առաջին անգամ մասնակցեցին Հայաստանի 18 պատվիրակներ, որոնց մրցակցությունները էին Իրանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի եւ Սիրիայի մարզուհիները: Հայ աղջիկների նորամուտը հաջող ստացվեց: Նրանք նվաճեցին տարբեր կարգի 23 մեդալներ՝ 2 ոսկե, 8 արծաթե եւ 13 բրոնզե: Մեր թիմին երկու հաղթական պարգեւներ բերեց մարզիչ Արմինե Ավետիսյանի սանուհի Յուլիա Չուգուրյանը, որն անգերազանցելի էր 200 մ համալիր լողում եւ 400 մ ազատ ոճով մրցաձեւում: Մրցաշարի ընթացքում ջրային մարզաձեւի հանրապետական ասոցիացիայի ներկայացուցիչ, ջրագնդակի հանրապետական ֆեդերացիայի պատասխանատու քարտուղար Էդուարդ Մանթաշյանը պատասխանատու հանդիպում ունեցավ Իրանի լողի ֆեդերացիայի իր գործընկեր Վահիդ Մուրադիի հետ: Հանդիպման ընթացքում կողմերի միջեւ համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերվեց:

Առջեւում եզրափակիչ փուլն է

Բասկետբոլի եվրոպայի առաջնության ընտրական վերջին խաղում «Բ» ենթախմբում Ռուսաստանի հավաքականը Լոնդոնում առավելության հասավ Անգլիայի հավաքականի նկատմամբ (81-79): Ռուսները տասը հանդիպումներում նույնքան հաղթանակ են տարել: Նման գերադրությունի հասան նաեւ «Է» ենթախմբում հանդես եկող Ֆրանսիացիները: Ընտրական մրցաշարը նրանք ավարտեցին լեհերի նկատմամբ հաղթանակով (89-73): Այսպիսով, Իսպանիայում կայանալիք հին աշխարհամասի առաջնության եզրափակիչ փուլում տանտերերից բացի կմրցեն նաեւ Հարավսլավիայի, Հունաստանի, Բոսնիա-Հերցեգովինայի, Իսրայելի, Լիտվայի, Լատվիայի, Գերմանիայի, Իտալիայի, Սլովենիայի, Ուկրաինայի, Խորվաթիայի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի եւ Ռուսաստանի թիմերը: Վիճակահանությունը կկայանա մարտի 1-ին:

ԽԱՂԱՑԱՆԿ

ՀՀ ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբի 1996-97 թթ. առաջնություն
Երկրորդ շրջան

12-րդ տուր
1 մարտի (շաբաթ)
67. «Զանգեզուր»-«Երեւան» ժ. 15.00
68. ՀՄՄ-«Ցեմենտ» ժ. 15.00
69. «Արաքսիր»-«Շիրակ» ժ. 15.00
2 մարտի (կիրակի)
70. «Ղարաբաղ»-«Կոտայք» ժ. 15.00
71. «Վան»-«Արարատ» ժ. 15.00
72. «Փյունիկ»-ԲԿՄԱ ժ. 15.00

13-րդ տուր
8 մարտի (շաբաթ)
73. «Շիրակ»-«Փյունիկ» ժ. 15.00
74. «Վան»-«Կոտայք» ժ. 15.00
75. «Երեւան»-«Արաքսիր» ժ. 15.00
9 մարտի (կիրակի)
76. «Ցեմենտ»-«Զանգեզուր» ժ. 15.00
77. «Արարատ»-ՀՄՄ ժ. 15.00
78. «Ղարաբաղ»-ԲԿՄԱ ժ. 15.00

13 մարտի (հինգշաբթի)
Գավաթի 1/4 եզրափակիչի
վիճակահանությունը ժ. 12.00

14-րդ տուր
15 մարտի (շաբաթ)
79. «Արաքսիր»-ԲԿՄԱ ժ. 15.00
80. «Ղարաբաղ»-«Ցեմենտ» ժ. 15.00
81. ՀՄՄ-«Շիրակ» ժ. 15.00
16 մարտի (կիրակի)
82. «Վան»-«Երեւան» ժ. 15.00
83. «Կոտայք»-«Արարատ» ժ. 15.00
84. «Զանգեզուր»-«Փյունիկ» ժ. 15.00

19 մարտի
Պահեստային օր

15-րդ տուր
22 մարտի (շաբաթ)
85. «Արարատ»-«Արաքսիր» ժ. 15.00
86. «Ցեմենտ»-«Փյունիկ» ժ. 15.00
87. «Երեւան»-«Շիրակ» ժ. 15.00
23 մարտի (կիրակի)
88. «Կոտայք»-«Զանգեզուր» ժ. 15.00
89. ՀՄՄ-«Ղարաբաղ» ժ. 15.00
90. ԲԿՄԱ-«Վան» ժ. 15.00

26-27 մարտի
Գավաթի 1/4 եզրափակիչ 1-ին խաղերը

30 մարտի (կիրակի)
Միջազգային ընկերական խաղ

16-րդ տուր
31 մարտի (երկուշաբթի)
91. «Արաքսիր»-«Կոտայք» ժ. 15.00
92. «Զանգեզուր»-«Ղարաբաղ» ժ. 15.00
93. ԲԿՄԱ-«Երեւան» ժ. 15.00
94. ՀՄՄ-«Վան» ժ. 15.00

17-րդ տուր
3 ապրիլի (հինգշաբթի)
95. «Ղարաբաղ»-«Արաքսիր» ժ. 16.00
96. «Վան»-«Զանգեզուր» ժ. 16.00
97. ԲԿՄԱ-ՀՄՄ ժ. 16.00
4 ապրիլի (ուրբաթ)
98. «Կոտայք»-«Փյունիկ» ժ. 16.00
99. «Ցեմենտ»-«Երեւան» ժ. 16.00
100. «Արարատ»-«Շիրակ» ժ. 16.00

8-9 ապրիլի
Գավաթի 1/4 եզրափակիչ պատասխան խաղերը

13 ապրիլի (կիրակի)
101. «Փյունիկ»-«Արարատ» ժ. 16.00
102. «Շիրակ»-«Ցեմենտ» ժ. 16.00

15 ապրիլի (երեքշաբթի)
Գավաթի 1/2 եզրափակիչի
վիճակահանությունը ժ. 12.00

18-րդ տուր
17 ապրիլի (հինգշաբթի)
103. ԲԿՄԱ-«Ցեմենտ» ժ. 16.00
104. ՀՄՄ-«Զանգեզուր» ժ. 16.00
105. «Արաքսիր»-«Վան» ժ. 16.00
18 ապրիլի (ուրբաթ)
106. «Երեւան»-«Արարատ» ժ. 16.00
107. «Շիրակ»-«Կոտայք» ժ. 16.00
108. «Փյունիկ»-«Ղարաբաղ» ժ. 16.00

19-րդ տուր
23 ապրիլի (չորեքշաբթի)
109. «Զանգեզուր»-ԲԿՄԱ ժ. 16.00
110. «Արարատ»-«Ցեմենտ» ժ. 16.00
111. «Վան»-«Փյունիկ» ժ. 16.00
112. «Երեւան»-«Կոտայք» ժ. 16.00
113. «Ղարաբաղ»-«Շիրակ» ժ. 16.00
114. ՀՄՄ-«Արաքսիր» ժ. 16.00

23 ապրիլի (չորեքշաբթի)
Միջազգային ընկերական խաղ

30 ապրիլի (չորեքշաբթի)
Աշխարհի առաջնության ընտրական խաղ
Հայաստան-Հյս. Իռլանդիա

3 մայիսի
Պահեստային օր

7 մայիսի (չորեքշաբթի)
Աշխարհի առաջնության ընտրական խաղ
Ուկրաինա-Հայաստան

13 մայիսի (երեքշաբթի)
Գավաթի 1/2 եզրափակիչ առաջին խաղերը

18 մայիսի (կիրակի)
Գավաթի 1/2 եզրափակիչ պատասխան խաղերը

23 մայիսի (ուրբաթ)
Պահեստային օր (19-րդ տուր)

28 մայիսի (չորեքշաբթի)
ՀՀ «Անկախություն» գավաթի եզրափակիչ

20-րդ տուր
1 հունիսի (կիրակի)
115. «Արարատ»-«ԲԿՄԱ» ժ. 17.00
116. «Շիրակ»-«Վան» ժ. 17.00
117. «Երեւան»-«Ղարաբաղ» ժ. 17.00
118. «Արաքսիր»-«Զանգեզուր» ժ. 17.00
119. «Փյունիկ»-ՀՄՄ ժ. 17.00
120. «Ցեմենտ»-«Կոտայք» ժ. 17.00

21-րդ տուր
5 հունիսի (հինգշաբթի)
121. «Արաքսիր»-«Ցեմենտ» ժ. 18.00
122. «Վան»-«Ղարաբաղ» ժ. 18.00
123. «Կոտայք»-ՀՄՄ ժ. 18.00
124. ԲԿՄԱ-«Շիրակ» ժ. 18.00
125. «Զանգեզուր»-«Արարատ» ժ. 18.00
126. «Փյունիկ»-«Երեւան» ժ. 18.00

22-րդ տուր
10 հունիսի (երեքշաբթի)
127. «Կոտայք»-ԲԿՄԱ ժ. 18.00
128. «Արարատ»-«Ղարաբաղ» ժ. 18.00
129. «Ցեմենտ»-«Վան» ժ. 18.00
130. «Երեւան»-ՀՄՄ ժ. 18.00
131. «Շիրակ»-«Զանգեզուր» ժ. 18.00
132. «Փյունիկ»-«Արաքսիր» ժ. 18.00

14 հունիսի (շաբաթ)
Անցումային խաղ Աբովյանում

15 հունիսի (կիրակի)
Հայաստանի ֆուտբոլի 1996-97 թթ.
Հ. Տոնոյանի անվան «Սուպեր» գավաթ
«Հրազդան» մարզադաշտում

Ծանոթություն. Միջազգային ընկերական հանդիպման (23.04) կայացման դեպքում 19-րդ տուրը տեղի կունենա պահեստային օրը՝ մայիսի 23-ին: Խաղերը տեղի կունենան զույգերում առաջինը նշված թիմերի դաշտերում:

digitised by A.R.A.R.@

ԱՆԿԱՐԱ

Թուրքիայում նորից ռազմական հեղաշրջման սպառնալիք

27 ՓԵՏՐՎԱՐ. DW. BBC. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»։ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հերքեց այն հաղորդագրությունը, թե ինքն իր գլխավոր նախազգուշացում է հղել վարչապետ Նեջմեդդին Էրբականին, որ չվտրձի հարցականի տակ դնել եկեղեցու անջատումը պետությունից։ «Հյուրրիյեթ» եւ «Սաբահ» թերթերի համապատասխան հաղորդագրությունները լրիվ անհիմն են», հայտարարեց Դեմիրելի մամլո քարտուղարը։ Նախարարների խորհրդում Էրբականն այդ հայտարարությունները սուտ անվանեց։ Սակայն նախագահի մամլո քարտուղարը հայտնեց, որ հինգշաբթի օրն իսկ Դեմիրելը բանակցելու համար մտադիր է հանդիպել Էրբականին։

Իսկ ուրբաթ օրը թուրքական բարձրաստիճան սպաները մտադիր են Ազգային անվտանգության խորհրդի նիստ անցկացնել։ Թերթերում հրապարակված Դեմիրելի նամակում ասված է, որ թե բանակը, թե համալսարանները, եւ թե փողոցի հասարակ ժողովուրդն անհանգստացած են։ Դեմիրելը Էրբականին խորհուրդ է տալիս ձեռնպահ մնալ գործողություններից, որոնք կարող են, նրա խոսքերով ասած, «Ավելացնել այդ անհանգստությունը»։ Հայտնվում է նաեւ, որ Դեմիրելի նամակի պատճենն ուղարկվել է Թուրքիայի զինված ուժերի գլխավոր հրամանատարին։

Շեշտենք, որ նամակի մասին լուրերը տարածվում են այն պահին, երբ սրվում են Էրբականի մահմեդական կառավարության եւ բանակի հարաբերությունները։ Վերջինս աշխարհիկ սկզբունքների պաշտպանն է Թուրքիայում։ Բանակը վերջին շաբաթների ընթացքում նախազգուշացրել է կառավարությանը հասարակական կյանքում մահմեդականության դերի բարձրացմամբ անհանգստացած։ Ընդդիմության ղեկավար Մեսուտ Յըլմազը երկրի բոլոր կուսակցություններին, բացի Էրբականի կուսակցությունից, երեկ կոչ արեց կազմակերպել ռազմական մի նոր հեղաշրջում։ Հիշեցնենք, որ 1960 թվականից Թուրքիայում 3 ռազմական հեղաշրջում է իրականացվել։

Իսրայելը խախտեց Օսլոյի համաձայնագիրը

27 ՓԵՏՐՎԱՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», RFI, DW։ Եվրոպական միությունն այսօր հայտարարեց, թե Երուսաղեմում հրեաների համար նոր բնակարաններ կառուցելու Իսրայելի կառավարության որոշումը ոտնահարում է միջազգային օրենքները եւ սպառնում Մերձավոր Արեւելքում խաղաղության գործընթացին։ Եվրոպական միությունը լիովին դատապարտում է Իսրայելին այս որոշման համար։ Իսրայելի կառավարությունը երեկ որոշեց Երուսաղեմի արաբական արեւելյան մասում գտնվող մի բարձունքի վրա կառուցել 6,500 տուն։ Սակայն այդ շինարարությունը չի կարող սկսվել մինչեւ դատավարության ավարտը, որն ընթանում է շինարարության համար տեղ ազատելու համար իր հողատարածից հված հրեա հողատերի բողոքով։ Գերագույն դատարանի կողմից գործի քննությունը կտեւի երեք շաբաթ, իսկ այդ ընթացքում շինարարությունը կասեցվել է։ Իսրայելի որոշումը դատապարտվել է նաեւ Չինաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ղեկավարության կողմից։ Սիրիան հայտարարեց, որ բնակավայրեր ստեղծելու Իսրայելի խաղաղությունը Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատման գլխավոր խոչընդոտն է հանդիսանում։ Իսկ պաղեստինյան ղեկավարներից մեկը՝ Ֆեսալ Հուսեյնին ուղղակի հայտարարեց, որ այդ քաղաքի կառուցումը իրականում նշանակում է Օսլոյում ստորագրված համաձայնագրի մահը։

ՐՈՍԱՆ

Ադրբեջանը, Վրաստանը, Ուկրաինան՝ ռազմավարական գործակիցներ

ԲԱՔՈՒ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ։ Վերջերս Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ ռազմավարական համագործակցության համաձայնագիր ստորագրվեց։ Ինչպես Բաքու կատարած այցի ժամանակ հաղորդել է Վրաստանի նախագահ է. Շեւարդնաձեն, որը մինչ այդ այցով եղել էր Ուկրաինայում, Ուկրաինայի ղեկավար Կուչման հայտարարել էր, որ իր երկիրը նույնպես մտադիր է միանալ այդ համաձայնագրին։ Նրա խոսքերով, ապագա եռակողմ համագործակցության հարցը կքննարկվի նաեւ Ադրբեջանի նախագահի՝ Կիեւ ձեռնարկելիք այցի ընթացքում

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում Ադրբեջանը զրկված է ձայնից

ԲԱՔՈՒ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ-ԱՆՏ-PRESS։ ՄԱԿ-ում անդամավճար չմուծելու պատճառով հանրապետությունը ինքնաբերաբար զրկվել է այդ կազմակերպության գլխավոր ասամբլեայում ձայնի իրավունքից։ Հանրապետությունը ձայնի իրավունքը կորցրել է ՄԱԿ-ի կանոնադրության թիվ 19 հոդվածով, որի համաձայն՝ երկու տարուց ավել ՄԱԿ-ի բյուջեին պարտք ունենալու դեպքում երկրները զրկվում են ասամբլեայում քվեարկելու իրավունքից։ Մեկնաբանելով այս իրողությունը՝ Ադրբեջանի ֆինանսների նախարարությունում նշել են, թե ՄԱԿ-ին ունեցած 3,4 մլն դոլարի պարտքը պատճառաբանվում է միջոցների բացակայությամբ։ Կառավարությունը, սակայն, փորձում է կարգավորել այս հարցն ու հույս ունի պարտքը մարել ընթացիկ շաբաթվա մեջ։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի հեռախոսային ցանցի վերակառուցման և վերազինման աշխատանքները արդյունավետ զարգացնելու, նոր հեռախոսահամարի իրական պահանջարկը որոշելու նպատակով «**ԱրմենՏել**» համատեղ ձեռնարկությունը անցկացնում է նոր հեռախոսահամարներ տրամադրելու դիմումների ընդունման և հաշվառման գործընթացը։ Դիմումների ձևերը կարող եք ստանալ և լրացնել (անձնագիրը պարտադիր է) Երևանի հեռախոսային ցանցի ԱՀԿ-ների բաժանորդների սպասարկման համապատասխան բաժիններում ժամը 9:00 - 16:30, ընդմիջում՝ 12:00 - 13:00։

Հասցեները՝

* Բաժանորդների սպասարկման կենտրոնական բաժին Չարենցի 76, Երևան
* 55 / 57 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Չարենցի 76, Երևան
* 22 / 26 / 27 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Գյուլբենկյան 26, Երևան
* 23/24 / 25 / 28 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Բաբայան 29 (էլ. ցանցի հարևանությամբ)
* 61 / 62 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Աճառյան 1նրբ. փող. N6, Երևան
* 45 / 47 / 47ա ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Նոր-Արեշ 5-րդ փող., 20 շենք, Երևան
* 52 / 53 / 56 / 58 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Նալբանդյան 28, Երևան
* 34 / 35 / 39 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Բաշինջաղյան 177, Երևան
* 42 / 44 / 46 / 48 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Հ. Հովսեփյան N 15, Երևան
* 72 / 73 / 74 / 77 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Օգանովի փող., Հարավ Արևմտյան թաղամաս (Ունիվերսամի մոտ),Երևան
* 63 / 64 / 65 ԱՀԿ բաժանորդների սպասարկման բաժին, Ն. Ստեփանյանի 1, Նորքի 2-րդ զանգված

«ԱրմենՏել» ՀՁ
ԵՀՏ Բաժանորդների
սպասարկման տնօրինություն

ԴԻՄՈՒՄ No

Հեռախոսի տեղադրման վերաբերյալ

Դիմող _____
/Անուն, Ազգանուն/

Հասցե _____

Անձնագիր _____
/Սերիա, համար/

"____" _____ 1997թ _____
/Դիմողի ստորագրությունը/

ՍՏԱՑԱԿԱՆ

Դիմումի No _____ "____" _____ 1997թ

ԵՀՏ Բաժանորդների սպասարկման տնօրինություն

ՉԵՋ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

«ԱՐՄԷՔՍՊՈ» ցուցահանդեսների եւ տոնավաճառների ոլեսական կենտրոնը (նախկին ԺՏՆՑ) ցանկության դեպքում կկազմակերպի Ձեր մասնակցությունը ա/թ

ՄԱՐՏԻ 19-28-Ը

կայանալիք

30-ՐԴ ԿԱՀԻՐԵԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ։

Ցուցահանդեսի թեման է. Լայն սպառման ապրանքներ։ Ձեզ ընձեռվում են լավագույն հնարավորությունները ներկայացնելու ձեր արտադրանքը եզիպտական շուկայում, շփվելու արտասահմանյան գործարար շրջանների հետ, գտնելու նոր գործընկերներ՝ Հայաստանում ներմուծման զարգացման համար։

Մասնակցությունը ցուցահանդեսին կբարձրացնի ձեր ընկերության իմիջը։

Մասնակցության պայմաններին ծանոթանալու համար դիմել «ԱՐՄԷՔՍՊՈ» ՑՏՊ կենտրոն։
Երեւան, Շիրակի 43,
հեռ. 56-31-32, ֆաքս 151 921 (AT&T)։

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժինը

Ներկայացնում է

իր առաջիկա անգլերենի ուսումնական ծրագրերը

Անգլերենի չորրորդ փուլ
Մարտի 17-ից մինչեւ ապրիլի 25-ը
Երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 17:00-20:15
Վարձը 95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
Գրանցման եւ վճարման ժամկետը մինչեւ մարտի 10-ը

Գործարար առաջարկների գրագրություն
Մարտի 18-ից մինչեւ ապրիլի 24-ը
Երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, ժամը 17:00-20:15
Վարձը 70 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
Գրանցման եւ վճարման ժամկետը մինչեւ մարտի 10-ը

Անգլերենի առաջին փուլ
Ապրիլի 28-ից մինչեւ հունիսի 6-ը
Երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 17:00-20:15
Վարձը 95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
Գրանցման եւ վճարման ժամկետը մինչեւ ապրիլի 21-ը

Զբոսաշրջություն
Ապրիլի 29-ից մինչեւ հունիսի 5-ը
Երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, ժամը 17:00-20:15
Վարձը 70 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ
Գրանցման եւ վճարման ժամկետը մինչեւ ապրիլի 21-ը

- *Դասընթացների գրանցումը եւ վճարումը տեղի կունենա Հայաստանի ամերիկյան համալսարանում, 19ա սենյակում։*
- *Յուրաքանչյուր դասընթացին կընդգրկվեն առաջին 15 դիմորդները։*
- *Դասընթացները կանցկացվեն Հայաստանի ամերիկյան համալսարանում։*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 2-րդ հարկում, ավտոնկակով։ Դեմիրճյան 17 շենք։
Հեռախոս՝ 52-38-84

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան, ավտոնկակով, Վրացական փողոցում։
ՀԵՌ՝ 25-11-87, 58-18-41

ԿՈՐԵԼ Է
«Կոմանդոս Ա» դուստր ձեռնարկության կլոր կնիքը։
Համարել անվավեր։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5-րդ հարկում, 70/50 քմ, ավտոնկակով։ Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ)։
Հեռախոս՝ 22-42-68

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնկակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի)։ «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ)։ Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի։
Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՍԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երևան-23, Արաքելոցաց 2, Գրանցման թիվ 65, Դասիչ 69149, Պատվեր 526, Տպաքանակը 3000, Ստորագրված է տպագրության 27.02.1997, Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@